



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևափոխով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԴՐԿՈՄԿՈՒՄԻ (բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԱԳՐԱ-
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Աշխատանքի նյութերի հետ միասին)
Կուսումնութիւնը ամբողջ ցանցի համար

338.97
Հ - 20

338.97

2-20

17 FEB 2010

ՀԱՅՈՒԹԵԱՆ
ԽԱՍՏԻՒԹԵԱՆ
ՎՈՏՈԽՈՅԵԱՆ
Ակադեմիա Հայաստանի
ՀՀ ՍՊԸ

ԱՐԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3

Կուսումունքի ամբողջ ցանցի համար

Թ Ե Մ ա

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԻ ԱՐԱԳԱՑԱԾ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

Առաջադրության նպատակը

Պարզել. — 1) համարաշխարհային տնտեսական կրիզիսի, վորութես պատերազմից հետո առաջին կրիզիսը, վորն ընդգրկել երլոր յերկրներն ու արտադրության բոլոր ճյուղերը, ծավալվել ե կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի հիման վրա:

2) Համաշխարհային տնտեսական կրիզիսի նոր, ժամանակից ըրջանի հիմնական գծերը, այն ըրջանի, վոր խորացել ե վարկային-դրամական ու վալյուտային կրիզիսով:

3) Կապիտալիզմի բոլոր հակասությունների սրվելը՝ թե կապիտալիստական յերկրների միջև, թե կապիտալիստական յերկրների ու գաղութների միջև և թե պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև. դրա շնորհիվ հեղափոխական կրիզիսի արագացած հասունացումը և բուրժուազիայի փորձերը այդ կրիզիսից յելնելու բանվորական դասակարգի վրա ճնշում գրանցելու միջոցով, նույնպես և գաղութային ու կիսագաղութային յերկրների ու Խորհրդային Միության հաշվին:

4) Մի շարք յերկրներում ֆաշիստացման ուժեղացման պատճառները և սոց.-դեմոկրատական կուսակցության քայլացման խորացման պատճառները: Կոմկուսների կազմակերպչական ու քաղաքական աճման ուժեղացումը և նրանց խնդիրները՝ համաշխարհային տնտեսական կրիզիսի նոր ըրջանի պայմաններում:

5) Խորհրդային Միության պրոլետարիատի, վորպես, համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադի պարտականությունները և կապիտալիստական յերկրների պրոլետարիատի պարտականությունները՝ կապված պատերազմի վտանգի և կապիտալիստների ինտերվենցիայի հետ՝ Խորհրդային Միության դեմ:

Главлит 7018

Напечатано в Гостипографии
"Красный Восток"
ДЗПОЛИГРАФА ВСНХ
Баку, Карантинная, 84.

Заказ 13072

Тираж 4000 экз. Стат-формат А-5.

Աշխատանիկի պլանը

1. ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻ ՏՏՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՄԻ
ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

- 1) Համաշխարհային տնտեսական կրիզիսի պատճառներն ու ընույթը, վոր ծավալվել ե կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի հիման վրա:

2) Կրիզիսի չտեսնված թափը.—արտադրության և աբտագրական ապահովատի կրճատումը, սպառման խիստ սեղմվելը, արտաքին առևտորի կրճատումը, հսկայական գործադրկությունը և այլն:

3) Գյուղատնտեսական կրիզիսի պատճառներն ու բնույթը և կապիտալիզմի զրջանակներում նրա լուծման անկարելիությունը:

4) Համաշխարհային կրիզիսի ժամանակաշրջանում տեղինիշական պրոգրեսսի կանգ առման ուժեղացումը։ Իդեոլոգիական փոռումի տարրերի աճումը։

5) Բուրժուազիայի փորձը կրիպհսից յենելու վնասատվության միջոցով (արգիւնաբերական ու գյուղատնտեսական ապրանքների պաշարի վոչնչացումը), բանվորական դասակարգի վրա ճնշում գործ դնելով՝ իմաստիալիտատական պատերազմների և Խորհրդային Միության գեմ ինտերվենցիա սարքելու միջոցով:

6) Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը դեպի կրիզիսը և նրա միջոցառությունը՝ կապիտալիզմը փրկելու համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստալին—„Լենինիզմի հարցերը” —կենտկոմի քաղաքական հաշվետվությունը 16-րդ համագումարում բոռմ—1-ին մաս:
 2. Աշխատանքի նյութ № 1.
 3. „Բոլշևիկ“ № 15 և № 16, 1931 թ., Մարկովի հոդվածը՝ «Համաշխարհային ազգաբարձրին կրիզիսի խորացման առթիվ»:
 4. „Բոլշևիկ“ № 16, Մ. Ռուբինշտեյնի հոդվածը՝ «Գիտությունը, տեխնիկան և եկոնոմիկան կապիտալիզմի պայմաններում և Խորհրդային Միությունում», մանավանդ, 4-րդ գլուխը, էջ 36,
 5. „Բոլշևիկ“ № 12, 1931 թ., առաջնաբողը՝ «Համաշխարհային տնտեսական առթիվ» և II ինտերնացիոնալը:

II. ՀԱՄԱՉԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՒՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՇՐՋԱՆԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

1. Համաշխարհային տնտեսական կրիպտոի նոր շրջան անցնելը: Վարկային—դրամական և վալյուտային կրիպտոս.

2. Վալյուտային և բանկային սնանկացումներ, բորսայական պանիկան, ակցիաների անկումը և բորսաների փակումն ու գրա աղդեցությունը համաշխարհային կապիտալիզմի ել ավելի թուլացման վրա:

3. ՖՈւՆԿԱ ՄԱՏԵՐԻԱՆԳԻ ԱՆԿՈՒՄԸ, ՎՈՐԱԲԵՍ ԱՄԲՐՈՂ հԱմաշխարհ հային ՓԻՆԱՆՍԱԿԱՆ սիստեմի ցնցում և անգլիական բուրժուազիայի ու նրա „բանվորական կառավարության“ պարտություն, և վորաբես փառը կապիտալիստական սիստեմի համաշխարհային կրիզիսի սրվելու դործում հետագա քայլ:

4. Յապոնիացի կողմից Մանջուրիան գրավելը, վորպես յառաջնական կապիտալիզմի ձգտություն լայնացնելու սպառման ու հումքի շուկաները և յելսելու կրիզիսից (միաժամանակ ստեղծելու ապագա ասպարեզը՝ Խորհրդացին Միության վրա հարձակվելու համար): Նույն նպատակով իմպերիալիստների ձգտումը՝ Զինաստանը բաժան-բաժան անելու:

5. Կապիտալիզմի յերկրների քանվորական ու գլուղացիական մասսաների նյութական ու կուլտուրական գրության վատացումը՝ կրիզիսի ազդեցության տակ. Գործազրկության, չքավորության և մահացության աճումը. գլուղացիության աղքատացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքի նյութ № 2—«Համաշխարհային տնտեսական կրթիկութ նոր շրջանը»:
 2. Աշխատանքի նյութ № 3—«Համաշխարհային վարկային կրթիկութ աճում ե»:
 3. Աշխատանքի նյութ № 4.—«Մանջուրիայի ռազմական գրավումը»:
 4. «Պրավդա» 31 թ. 3/X—«Զինաստանի բաժանումը»:
 5. «Կոմինտերն» ժուրնալ № 24, 31 թ. 31/VIII—Նառաման—«Ունտերնացիոնալի Վիեննայի կոնքիստու և համաշխարհային տնտեսական կրթիկութ»:

III. ԿԱՊԻՏԱՆԻՉՅՄԻ ԲՈԼՈՐ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՎԵԼՔ ՑԵՎ
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՐԻԶԻՄԻ ԱՐԱԴ ՀԱՍՈՒՑՅՈՒՄԸ

1. Կը իզիսի ազդեցությամբ՝ իմակերիալիստների պալքարի սրումը — սովառման, հիմունքի և կապիտալները գործադրելու շուկաների համար:

2. Տնտեսությունների կապիտալիստական և սոցիալիստական սխտեմի հակասությունը, վորպես ժամանակակից հակառակությունների հիմնական առանցքը:

3. Գաղութային և կիսագաղութային յերկրների՝ իմպերիալիզմի մղած պայքարի սրվելը; Զինաստանի կարմիր բանակի պայքարը:

4. Կապիտալիստական կրիզիսի խորացումը (Գերմանիա, Անգլիա և այլն), բուրժուական պետության ֆաշիստացումը և մասսաներին բուրժուական ազատությունից զրկելը:

5. Սոցիալ-դեմոկրատիայի ֆաշիստացումը և նրա հականեղափոխական գերը: Սոցիալ-դեմոկրատիայի քայլայումը և սոցիալ-դեմոկրատ բանվորների անցնելը կոմունիստների բանակը:

6. Պրոլետարիատի և գյուղացիության պայքարի սրվելը կապիտալիզմի գեմ: Պրոձադուների և գյուղացիական տարերաբին յերկրթների աճումը: Պրոլետարիատի դասակարգային գիտականության աճումը և կոմկուների ազդեցության ուժեցումը:

Գրականություն

1. Կոմինտերնի գործկոմի XI պլենումի թեղիսները – Մանկելսկու գեկուցման առթիվ. մասն II և III (առանձին գրքույկով, կամ „Պրավդա“ № 113, 31 թ. 24/V).

2. Աշխատանքի նյութ № 5 – „Դասակարգային մարտերն Անգլիայում“

3. Աշխատանքի նյութ № 6 – „Կառավարական կրիզիսը Գերմանիայում“:

4. „Պրավդա“ 28/X 31 թ. № 268 – ի, Յերուխիմովիչ – „Պրաֆացանից մինչև Իվերգորդոն“:

5. Գրականություն, վոր մատնանշված և այս առաջադրության II մասի համար:

IV. Միջազգային գրուեստիլացի Յեզ ԽՈՐՃ. ՄիջիթՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԽՆԴԻԲՆԵՐԸ – ՀԱՄԱՇԽԱՄՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՄԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ, ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՅԵզ ԽՆՏԵՐՎԵՆՑԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1. Սոցիալիզմի ժամանակաշրջանը մտած և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն այս տարի ավարտող Խորհրդային Միության սոցիալիստական տնտեսության բուռն աճումը:

2. Խորհ. Միության Արդյունաբերության աճումը: Հնգամյակի կատարումը 3 և 2½ տարում, գործադրկության վերացումը,

հիմնական ներդրումների ավելացումը, արդյունաբերության աճցնումը 7 ժամկա բանվորական որվա:

3. Գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Գյուղացիական տնտեսությունների 60%-ի կոլեկտիվացումը: Հացահատիկային հիմնական ուղղուներում համատարած կոլեկտիվացման ավարտումը և այնտեղ կուլակության-վորպես դասակարգի վոչնչացումը:

4. Բանվորական գասակարգի ու աշխատավոր գյուղացիության նյութական-կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը և նրանց քաղաքական ակտիվության աճումը:

5: Խորհրդային Միության պլուտարքակատի խնդիրները՝ պատերազմի և ինտերվենցիայի սպառնալիքի պայմաններում. – ա) սոցինարարության բոլշեկիլան տեմպերի անշեղ իրագործումը. բ) Կարմիր Բանակի ամրապնդումը և յերկրի պաշտպանության բարձրացումը. գ) Կոլեկտիվացման գործի ավարտումը և մեր յերկրում ինտերվենցիայի վերջին հենարան կուլակության-վորպես դասակարգի վոչնչացումը. դ) անշեղ պայքար աջ թեքման-վորպես տվյալ ետապում գլխավոր վտանգի դեմ և „ձաղ“ թեքման դեմ, վոր իր աջ եյությունը քողարկում և ձախ ֆրազներով, նույնպես և լենինյան աղգային քաղաքականությունից արվող թեքման դեմ, վորը միանում և ինտերվենտների հետ:

6. Կապիտալիստական յերկրների կոմկունների խնդիրները՝ իմպերիալիստական պատերազմների և Խորհրդային Միության դեմ ինտերվենցիայի սպառնալիքի պայմաններում. – ա) պրոլետարիատի մեծամասնությանը գրավել կոմունիզմի կողմը. բ) պայքար սոցիալ-դեմոկրատիայի դեմ՝ նրա ազդեցությունից բանվորական մասսաները հանելու համար. գ) մերկացնել Խորհրդային Միության դեմ պատրաստվող ինտերվենցիան և պայքարել դրա դեմ:

7. Աղբբեջանի պրոլետարիատի խնդիրները՝ պատերազմի և ինտերվենցիայի սպառնալիքի պայմաններում. – ա) Կատարել նավթի, բամբակի, ձկան և այլ պլանները. բ) բամբակային ուայոններում պատրաստել համատարած կոլեկտիվացումը և այնտեղ կուլակին-վորպես դասակարգ վոչնչացնել. գ) ամբողջ աշխատանքը վերակառուցել ընկ. Ստալինի ցուցմունքների վոգով. դ) անխնա պայքար մղել կուսակցության հիմնական գծից յեղող թեքումների դեմ և լենինյան աղգային քաղաքականությունից արվող շեղումների դեմ. է) Սնդրֆեկերացիայի-վորպես զանազան աղցությունների աշխատավորների յեղայրական միության հետագա ամրապնդումը:

Գրականություն

Այս բաժնի համար հատուկ գրականություն չի տրվում:
Բաժինը լուսաբանվում ե դեկավարի զրուցով:

Լրացուցիչ գրականություն

- «Պրավդա» 23/IX—31 թ.—Մաղյար—“Յապոնական իմպերիալիզմը Մանջուրիայում”՝ 1/X 31 թ.,
Առաջնորդող՝ 10/X 31 Մաղյար, “Տնտեսական կրիզիսը քրանսիայում”;
- Մանուկյան զեկուցումը և յեղափակիչ խոսքը՝ Կոմինտերնի Գործկոմի Խ պլենումում:
- “Պրավդա»—28/IX 31 թ.՝ Գրաֆալցանից մինչև Խովենդորդուն:

Սույգման հարցեր

- Խոչով են տարբերվում հետպատերազման տնտեսական կրիզիսը և արդյունաբերական նորմալ՝ կրիզիս.
- Վորոնք են համաշխարհային տնտեսական կրիզիսի ժամանակակից արջանի բնորոշ գծերը և ինչու այդ կրիզիսը անհնար և լուծել կապիտալիզմի վրանակներում:
- Բուրժուազիան ինչ ուղիներով և ձգտում դուրս գալու ժամանակակից տնտեսական կրիզիսից:
- Ժամանակակից կապիտալիզմի վեր տեսակի հակասություններն են արագացնում հեղափոխական կրիզիսի հասունացումը և ինչպիսի ցուցանիշներ կան զանազան լերկրներում:
- Ի՞նչ դիրք են բնում սոցիալ-ֆաշիստական կուսակցությունները և 2-րդ ինտերնացիոնալը՝ ժամանակակից տնտեսական կրիզիսի վերաբերմանը:
- Ի՞նչի համար ե բուրժուազիան՝ գլուխ ունենալով 2-րդ ինտերնացիոնալը՝ ինտերվենցիա պատրաստում Խորհրդային Միության դեմ և այդ պայմաններում ինչ անելիքներ ունեն Խորհրդային Միության պրոլետարիատն ու կապիտալիստական լերկրների պրոլետարիատը:
- Կապիտալիստական յերկրների կոմկուսների կազմակերպչական ու քաղաքական աճումը և ինչումն ե կայանում նրանց ինդիրը՝ համաշխարհային տնտեսական կրիզիսի նոր արջանի պայմաններում:

9. Ինչ խնդիրներ ունին Բազիկի ու Աղրբեջանի պրոլետարիատ՝ ինտերվենցիայի սպառնալիքի պայմաններում:

Մերոդական ցուցմունքներ

1. Առաջադրության առաջին մասը կրում ե ներածական բնույթի՝ Դրա մասին ունկնդիրները այս կամ այն ձևով լսել են նաև առաջ: Ուստի զեկավարն ուշադրությունը յերկար չի կենտրոնացնում այդ մասի վրա, այլ վեր և լուծում այն չափով, վորքան հարկավոր ե համաշխարհային տնտեսական կրիզիսի ներկա արջանի ըմբռման համար: Հետեաբար, առաջին մասը կամ պիտի թուուցիկ անցնել կամ փոխարինել զեկավարի ներածական խոսքով: Իսկ ամբողջ ուշադրությունը պիտի կենտրոնացնել վերջին 3 մասերի վրա: Այդ մասերը վերլուծելիս պետք ե հետևյալ սպառակները հետապնդել:

2. Ունկնդիրները պետք ե յուրացնեն համաշխարհային տնտեսական կրիզիսի ժամանակակից արջանի առանձնահատկությունները և պրոլետարիատի խնդիրները՝ այդ կրիզիսի պայմաններում:

2. Պիտի դրդել ունկնդիրներին մտնելու ՄՈՊՐ-ի խմբակները, ոտարերկրյա բանվորների հետ կապ ստեղծելու խմբակները, կամ ընկ. Ստալինի ցուցմունքների հիման վրա աշխատանքների վերակարուցման ինքնաստուգման բրիգադները, վորովհետև ընկ. Ստալինի գիրեկտիվների կատարումը կնշանակի՝ բարձրացնել Խորհ. Միության մարտական կարողությունը և հենց դրանով մեր պարտականությունները կատարել միջազգային պրոլետարիատի հանդեպ:

3. Ունկնդիրների համար պարտագիր գրականություն և հանդիսանում Ստալինը և աշխատանքի նյութը: մնացած նրանք պիտի ուսումնակարգ կամավոր կարգով: Քանի վոր առաջադրության վոչ բոլոր կետերն են լուսաբանվում գրականության մեջ, դրանք պիտի լուսաբանի ինքը զեկավարը: Դա առանձնապես վերաբերում ե Խորհրդային Միության և Աղրբեջանի պրոլետարիատի պարտականություններին՝ ինտերվենցիայի սպառնալիքի պայմաններում:

Առաջադրությունը կազմից՝ կՌիԶիՆ

Աշխատանքի նյութ № 1.

ՀԱՄԱՀԻԱՐԱՅԻՆ ԿՐԻԶԻՍԻ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՄՐՈՒՄԸ

Համաշխարհային կրիզիսը վերջին ամիսներս չափազանց խորացել և սրվել է: Միջին Յեվրոպայում նա մինչև իսկ հասել և վարկային և բանկային կրիզիսի, վորն ավելի ու ավելի լայնանում և և սպառնում կապիտալիստական տնտեսությունն ամենասուր կրապով ցնցելու: Անգլիան վարկային սուր կրիզիսի նախորյակին եւ Վարկային կրիզիսի զարգացման կարևորագույն մոմենտները հետեւալներն են:

1) Գարնանային աշխատացումը, վորի վրա մեծ հույսեր են դրվում, արագորեն վերջացավ: Արդեն մայիսին տեղի ունեցավ արտադրության նոր անկում, վորը հունիսին և հուլիսին բարձականացափ ուժեղացավ:

2) Համարյա ըուլը յերկրներում բյուջեների մեջ հսկալական բացեր են գուացել վորոնք մի շարք յերկրներում—Գերմանիայում, Ավստրալիայում, Հարավային Ամերիկայում և այլն—հասցըել են պետական ֆինանսների կրիզիսին:

3) Տնտեսական կրիզիսի խորացումը՝ Միջին և Արևելյան Յեվրոպայի պետական ֆինանսների կրիզիսի շնորհիվ հասցըել և վարկային, դրամական և բանկային կրիզիսին: Վարկային կրիզիսը տարածվում է նաև ուրիշ յերկրների վրա:

4) Բուրժուական տնտեսագետները դադարեցրել են գեմագորիական դատարկարանությունները բարձր աշխատավարձի—վորակես յերկրի բարձր բարեկեցության հիմունքի մասին: Բուրժուազիան միանգամայն բացարձակորեն և ուժեղ կերպով կրիզիսից յելք և փնտրում պրոլետարիատի հաշվին:

5) Մի շարք յերկրներում մենք տեսնում ենք հեղափոխական կրիզիսի արագ հասունացումը, վորն իր հերթին սրում և վարկային կրիզիսը:

6) Գարնանը շատ տարածված լավատեսական գուշակությունները, թե կրիզիսը շուտով կվերջանա, այժմ համարյա դադարել են. բուրժուական տնտեսագետները կրիզիսը վերջանալու մոմենտը ավելի ու ավելի հեռացնում են:

Նոր անկում գարնանային վերելից հետո

Գարնանը՝ սկզբնային աշխատացման տպավորության տակ՝ կոնյուկտուրային զանազան ինստիտուտներ գուշակում են կրիզիսի մոտիկ վախճանի մասին:

Վերջին շաբաթների իրական դարգացումը ապացուցում է բուրժուական տնտեսագետների այդ պնդումների անհեթեթությունը: Հուլիսի սկզբին Ամերիկայում պողպատի արտադրանքն ընկել և 33 տոկոսով, ավտոմոբիլային արտադրությունը խիստ կրճատվել է, կառուցումները նորից սեղմվել են: Միջին Յեվրոպայում տնտեսական զրությունը նորից սուր կերպով վատացել է՝ շնորհիվ վարկային կրիզիսի: Անգլիան գտնվում է ֆինանսական սուր կրիզիսի նախորյակին, և «ազգային» կառավարություն կազմելու նպատակն է՝ խուսափել ֆինանսական կրիզիսից՝ դաժանորեն բանվոր դասակարգի դեմ հարձակվելու միջոցով:

Ագրարային կրիզիսը շարունակում է սրվել, գյուղական բնակչության գնողական ունակությունը շարունակում է ծայրացնելում սահմանափակված մնալ: Գյուղատնտեսական արտադրանքի և արդյունաբերական հումքի գների անկումը վերջին ամիսներս շարունակվում են:

Հումքի գների, պատրաստի արդյունաբերական ապրանքների մեծավաճառքի գների և մանրավաճառքի գների,—վորը պիտի վճարի սպառողը,—զրանց մեջ յեղած տարբերությունը վոչ միայն բավական մեծ է, այլև ավելի ու ավելի խորանում է, վորով չափազանց դժվարանում և ապրանքային ավելցուկ մասսայի սպառումը: Բայց առանց ապրանքային ավելցուկ մասսան բավականաչափ քչացնելու, նոր իջեցումը անհնար և դառնումը: Ապրանքային պաշտոները չեն կրճատվում, իսկ կրիզիսի վերջն ավելի ու ավելի հեռանում են:

Թե վորքան ուժեղ է իջել արդյունաբերական արտադրանքը կրիզիսի ժամանակ զիսավոր յերկրներում՝ ցույց ետալիս կոնյուկտուրային հետազոտությունների ինստիտուտի արտադրական ինդեքսը.

(1928 թ.—100)

	Գիրմանական	Անդրանիկ	Լեռնաց	Շինուազ	Չին	Թիան	Հանագ	Հանագ	Հանագ
1929 թ. Մ ... դ ...	101,4	107,9	99,8	122,7	109,4	111,6	106,3		
1930 " Մ ... դ ...	83,6	96,1	82,2	119,1	110,2	94,9	86,8		
1931 " Հունվար	67,7	82,7	74,0	102,7	104,7	82,0	73,9		
" Փետրվար	68,8	—	71,3	111,8	104,7	84,3	77,5		
" Մարտ	72,2	—	70,4	110,9	103,9	88,6	79,3		
" Ապրիլ	74,0	—	71,8	—	—	—	80,		

Վարկային կրիզիսը

Վերջին յերկու ամիսների գլխավոր յերկութը հանդիսանում է վարկային կրիզիսը, վորոն անսովոր ուժով ընդրկել և Միջին Յելրոպան, տարածվում մի շարք ուրիշ յերկրների վրա և, առաջին հերթին, Անգլիայի վրա ու չափազանց վատանում է կապիտալիստական տնտեսության դրությունը:

Ընդմին աչքի ե զարնում կրիզիսի զարգացման անհավատալի անհամաշխատությունը, Այն ժամանակ յերբ Միջին Յելրոպայի յերկրները դանվում են վարկային կրիզիսի նախորյակին, Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում և Անգլիայում կարճամանակյա փոխատվական կապիտալի չտեսնված ավելցուկ կար: Մակսին Նյու-Յորքի ֆեդերալ պահեստի բանկի զեղջի տոկոսն իշեցված եր 2,5%-ի, մի տոկոս, վոր 1909 թվից սկսված դեռ չեր յեղել: Միացյալ Նահանգներում առաջնակարգ բանկային մուրհակները՝ 90-որյա ժամկետով՝ ղեղջվում եին 1% -ով: Միացյալ Նահանգների կառավարությունը կարողացել ե հունիսի վերջին գրամական բորսայում տեղավորել 800 միլ. դոլարի արժեքավոր մուրհակներ տարեկան 5/8 տոկոսով: Ֆրանսիայում բանկերը մինչև իսկ արգելք են հանդիսանում նոր ավանդներ ընդունելուն:

Դրա հետ միասին, միջին յելրոպական յերկրներում և կրիզիսից ամենից շատ տուժած անդրովիկիանոյան ադրարային յերկը ըստ արդեն յերկար ժամանակ ե, ինչ պակասություն ե նկատվում թե կարճամկետակին և թե՛ ավելի մեծ չափով՝ յերժամկետային վարկի: Այստեղ զեղջային դրույքը մի քանի անգամ բարձր ե յեղել, քան թե կապիտալ արտահանող յերկրներում: Ժամանակակից կրիզիսի բնորոշ առանձնահատկությունն ե հանդիսանում այն հանգամանքը, վոր չնայած տոկոսային դըրույքների հսկայական տարբերությանը, կապիտալի տեղափոխությունն մեծ չափով չի յեղել: Կապիտալի արտահանությունը չափազանց փոքրացել ե: Գերմանիայից և Ավստրիայից հանվել են այնուեղ դրված կարճամկետային գումարները, վոր նպաստել ե վարկային կրիզիսի պայմանակի:

Վարկային կրիզիսի յելակետն Ավստրիան ե, վորտեղ նա հասել ե իր զագաթնակետին կրեղիտանշտալդ բանկի սնանկացման մոմենտին: Այդտեղից նա անցել ե Գերմանիա, վորտեղ՝ Ռեյխսբանկում դեվիզների և վոսկու պաշարներն արագորեն քշանալուց հետո՝ սնանկացել ե Դարմշտադի բանկը, ժամանակավորապես դարձարեցրել ե բանկերի գործունեյությունը, ժամանա-

կավորապես դադարեցրել ե վարկային սխատեմի գործունեյությունը, վայուտայի կայունության համար սպառնալիք ե ըստեղծել:

Վարկային կրիզիսն անցել ե մի շարք ուրիշ յերկրներ: Վեսգրիայում, ինչպես և Գերմանիայում, փակվել են բոլոր բանկերն ու բորսան՝ ընդհանուր քայլքայումը կանխելու համար: Վարկային սուր կրիզիս ե պայմանական կատարած վարությունը մի շարք արտակարդ միջոցներ ե ձեռք առել:

Մինչև իսկ Լեհաստանին ել սաստիկ կազել ե վարկային կրիզիսը, չնայած այն բանին, վոր նա, ի հարկե քաղաքական պատճառներով, ոգտվում ե Ֆրանսիայի ֆինանսական ոգնությունից:

Հուլիսի կեսերին նաև Անգլիայում, վոր Միացյալ Նահանգների հետ միասին համաշխարհային բանկերի դեր եր իսպառմ, վարկային վերահս կրիզիսի նշաններ յերեացին: Հուլիսի ընթացքում նկատելի եր վոսկու ուժեղ արտահոսում լուսականից: Սկսած հուլիսի կեսից ամեն որ դուրս եր հոսում 3,5 միլիոն ֆունտ-ստերլինգ: Հուլիսի 22-ին անգլիական բանկի վոսկու պլաշարը 14 միլ. ֆունտ ստերլինգով իջավ այն մինիմումից, վոր ըն անհրաժեշտ ե ֆունտ-ստերլինգի վոսկի պարիտետը պահելու համար: Վոսկու արտահոսումը դարձավ անխուսափելի: Դրա հետեւնքով անգլիական բանկը հուլիսի 22-ին ստիպված եր զեղջի դրույքը բարձրացնել 4,5%-ի:

Անգլիայի «աղջային» կառավարություն կազմելը նպատակությունը բանվոր դասակարգին կողոպտելու միջոցով՝ անգլիական կապիտալիզմը փրկել վարկային ու ֆինանսական կրիզիսից:

Ազգարային կրիզիսը նոր բերքի ժամանակաշրջանում

Հուվերի պլանը դեպի վեր շարժում առաջ բերավ վոր միան արժեքների շուկայում, այն հացի շուկայում: Ցորնի գները համաշխարհային շուկայում հունիսի սկզբից բարձրացան՝ բուշելինի մի քանի ցենտով: Սակայն արդեն հուլիսի վերջին և ոգոստոսի սկզբին հացի ու բամբակի գները նորից ընկան:

Հետազոտենք, ամենից առաջ, ցորնի գները: Մյուս տեսակի հայտատիկների գները կանոնավոր կրպով հստեսում են ցորնի գներին: Իսկ կերպանյութերի գների դրույթյունը՝ վորոշ ժամանակամիջոցից հետո՝ վորոշում ե նաև անասնաբուժական մթերքների գների դրույթյունը:

Ցորնի գների կազմության վրա ազդող ֆակտորներից մեծ նշանակություն ունեցողը փոխանցիկ պաշտրների չափն ե, վեր-

ջին վիճակագրական տեղեկություններն առ 1-ն ապրիլի հետեւ վայաներն են.—

Ցորենի ակնհայտնի պաշտոներն առ 1-ն ապրիլի (միլ. բուշելներով)

Միջնը 1910/14	Միջնը 1926/30	1930	1931
Միացյալ Նահանգներ . . .	84	133	212
Կանաչա	38	145	195
Ավտորակա և Արդենտինա	18	58	66
Անդիս	65	67	47
	205	403	518
			600

Միացյալ Նահանգների ակնհայտնի պաշտոնները, — այսինքն այն պաշտոնները, վոր գտնվում են ելեվատորներում, տրանսպորտային պահեստներում և այլն, չհաշվելով արտադրողների և գյուղատնտեսական միության մոտ յեղած պաշտոնները, — առ 1-ն ապրիլի յեղել են 20%-ով ավելի, քան թե անցյալ տարի: Այդ պաշտոններն ուղղություն անգամ ավելի են, քան թե նախապատճերազման վերջին 5 տարիների միջնն պաշտոնը:

Այդ փոխանցիկ պաշտոնների նշանակությունը կայանում է նրանում, վոր գրանք հավասար են ամբողջ աշխարհի ցորնի համարյա ամբողջ տարեկան արտահանության չափին:

Ընթացիկ տարվա բերքի չափի մասին, ինարկե, գեռևս չեկարելի շատ թե քիչ ճշգրիտ տվյալներ մեջ բերել: Հոռվմի ագրարային ինստիտուտը մատնանշում ե, վոր ամբողջ աշխարհի, բացի Խորհրդային Միությունից, ցանած տարածությունը 1930/31 թվին կազմում ե 94,4 միլիոն հեկտար՝ 1929/30 թվի 98,8 միլիոնի դիմաց: Այդպիսով մենք 4,4 միլ. հեկտար նվազում ունենք:

Տագնապալից տեղեկություններ են ստացվում կանադայի վատ բերքի մասին՝ յերաշտի շնորհիվ, բայց՝ յեկալով նախորդ փորձից՝ դրան չի կարելի շատ մեծ նշանակություն տալ վորով հետեւ ըստ յերեսությին Միացյալ Նահանգների բերքը միջակից բարձր ե լինելու, ուստի Միացյալ Նահանգների և կանադայի բերքը միասին վերցրած, հավանական ե, վոր անցյալ տարվա բերքը միասին վերցրած, հավանական ե, վոր անցյալ տարվա նիշ չափ լինի: Մինչև այժմ ունեցած տեղեկությունների համաձայն՝ հուսիսային կիսագնդի վատ բերքի մասին ընդհանրապես խոսք լինել չի կարող, մասնավանդ, վոր Միացյալ Նահանգներում բերքի 20 միլ. բուշել առում ունենք:

Յեթե հարավային կիսագնդի ցորեն արտահանող յերկու գլխավոր յերկուներում — Արդենտինայում և Ավտորակալիայում — չի-

նի կատաստրոֆիկ անըերբիություն, այն ժամանակ ցորնի՝ տուածարկը համաշխարհային շուկայում ներկա բերքային տարում, աչքի առաջ ունենալով մեծ պաշարները, վոչ մի գեղքում պակաս չի լինի անցյալ տարվանից: Յեթե մենք ուշադրության առնենք, վոր ցորնի սպասումը՝ շնորհիվ ծանր տնտեսական կրիզիսի, աշխատավարձի ցածրացման և գործադրեկության աճման՝ ել ավելի պակասելու տեսնեցիք ունի, պարզ կլինի, վոր հաջորդ բերքատվական տարում ագրարային կրիզիսն ել ավելի կորվի:

(Վարգայի հոդվածից. «Պրակդա» 1931 թ. I/X, № 241):

Աշխատանիքի նյութ № 2.

ՀԱՄԱՀԱՐՑԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Համաշխարհային տնտեսական կրիզիսը մտել ե իր զարգացման նոր շրջանը:

Կրիզիսն արդեն յերկու տարի ե, վոր բռնել ե կապիտալիստական աշխարհը: Կրիզիսը յերեան ե գալիս բորսաների սնանկացումով, ակցիաների, արժեթղթերի պետական որիգացիաների, պարտագրերի արժեքագուրկ լինելով: Ամեն տեղ, թեկուզ և շատ անհամաշափ կերպով, ընկնում են մեծաքանակ վաճառքի գները: Կապիտալիզմի պատմության մեջ դեռևս չտեսնված՝ արտադրության հսկայական կրծատումը կապիտալիստական յերկըըներում ընդգրկել ե արդյունաբերության բոլոր ճյուղերը, բացառությամբ ուղղականի: Արտադրության կրծատման հիման վրա՝ գործադրկությունը ընդունել ե կապիտալիզմի պատմության մեջ չտեսնված չափեր:

Միջազգային կապիտալիզմի արտադրական ապարատը բեռնավորված ե կիսով չափ, իսկ շատ ճյուղերում դրանից ել պակաս:

Ներքին շուկաների սաստիկ նեղանալու շնորհիվ առաջ յեկած ներքին առեստի կրծատման հետ միասին միանգամայն բացառիկ կերպով նեղանում են և արտաքին շուկաները: Պակասել ե յրկաթուղիների, ովկիանոսյան և գետային նավագնացություն, մոտարային և այլ տեսակի տրանսպորտի բեռնաշրջանառությունը: Ագրարային կրիզիսը քայլացում ե միլիոնավոր, տասնյակ միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները: Ապրանքային պաշտոնները աճել են և շարունակում են անզուսպ կերպով աճել: Յեղած փոսկու մի մասն ընկած ե առանց գործածության և չի գործում վորպես կապիտալ (Միացյալ Նահանգներ և Ֆրանսիա):

Արտադրության գանազանց ճյուղերի միջև յեղած անհամաշափությունը սրվել ե շատ ուժեղ չափով, խորացնելով հակասություններն իմպերիալիզմի և գաղութների միջև, արդյունաբերության և գյուղական տնտեսության միջև, արդյունաբերության՝ մենալանառությունը գերակշռող ճյուղերի և մենավաճառությունը դեռև չզարգացած ճյուղերի միջև։ Ակցիոներական ընկերությունների և ձեռնարկների մեծամասնության դիվիդենտները (շահութները) խիստ պակասում են։ Գներն ընկնելու շնորհիվ հիմնական կապիտալի տարրերն արժեքազուրկ են լինում։ Կրիզիսի և գների ընդհանուր անկման հետևանքով կանգ ե առնում և քայլքայվում ե վերարտադրության պրոցեսը։

Չնայած հարկային ճնշման անորինակ ուժեղացմանը՝ պետական յեկամուտներն ընկնում են։ բյուջեները քայլքայվում են։ Արծաթն արժեքազուրկ ե լինում։ Դեռևս կրիզիսի սկզբին ըսկըսվել է մանր և միջին ձեռնարկների մասսայական սնանկացումը։ ավելի թույլ ու աղքատ յերկրներում սկսել եր միջազգային պարտագրերի շղթայի կարգելը։ ավելի թույլ յերկրներում սկսել եր վալյուտայի արժեքազուրկ լինելը։

Մի շարք յերկրներում, վորտեղ կրիզիսը սրվում ե տեղական առանձնահատուկ պայմանների շնորհիվ, նաև իր խորացման ու լայնացման ընթացքում հասցը և հեղափոխական կրիզիսի տարրերի հասունացմանը կամ թե հեղափոխական կրիզիսին։ Պրոլետարիատի և բուրժուազիայի միջև յեղած հակասությունները խօրանում ու սրվում են։

Խոշոր և խոշորագույն մոնոպոլիստական միացությունները յերկար ժամանակ դիմադրում եին կրիզիսին։ Նրանք փորձում եին իրենց ապրանքների զնելը պահել նախկին մակարդակի վրա կամ թե կանգնեցնել գների անկման պրոցեսը։ Նրանք պահել են իրենց ապրանքային պաշարները։ Նրանք փրկեցին իրենց ձեռնարկները սնանկացումից, կրիզիսի ծանրությունը փոխադրելով բանկությունների վրա, հիմնական գյուղացիական մասսաների վրա, մանր բուրժուազիայի վրա, մանր ու միջակ ձեռնարկների վրա, արտադրության այն ճյուղերի վրա, վորտեղ մոնոպոլիան թույլ ե զարգացած։

Խոշոր և խոշորագույն իմպերիալիստական յերկրները կրիզիսի ծանրությունը փոխադրել են պարտված, թույլ կախյալ գաղութային և կիսագաղութային յերկրների վրա, դրանով նըրանք աշխատում եին փրկել իրենց բյուջեի հավասարակռությունը, իրենց վալյուտայի կայունությունը, իրենց վարկային սիստեմի ամրությունը։ Համարյա յերկու տարի շարունակվել ե

այդ պայքարը։ Գործադուրկների տասնյակ միլիոնանոց բանակների, գործ ունեցող բանվորների աշխատավարձի իշխում, գյուղագիտական մասսաների աղքատացում, մանր բուրժուազիայի թալանում, հսկայական սովածություն գաղութներում, հսկայական բռնություններ թույլ և պարտված ազգությունների վերաբերմաբ, արտադրական ուժերի անմիտ քայլքայում և արդեն արտադրած ապրանքների վոչնչացում, անխնա հարձակում սոցիալական որենսգրության, առողջապահության և կուլտուրական ծախսերի վրա, սովոր գրկանքներ, աշխատավորների տանջանքներ, —ամեն ինչ փորձվել ե խոշոր և խոշորագույն մոնոպոլիստական միացությունները կրիզիսի հարվածներից փրկելու համար։

Խոշորագույն իմպերիալիստական յերկրները յերկու տարվա ընթացքում կատաղի, հուսահատական պայքար են տարել, գործեսպի խորտակումից աղատեն ֆինանսական ոլիգարխիայի հրամանատարական բարձունքները — բանկերը, կոնցերները, տրեստները, սինդիկատները, վարկային ու վալյուտային սիստեմը, միջազգային պարտքերի և վճարումների սիստեմը։ Միջազգային բուրժուազիան, վոր ալդ պայքարում հասել ե սուր ընդհաման պրոլետարիատի հետ, արտադրական ուժերի հետ, կախյալ կիսագաղութային և գաղութային յերկրների հետ, փորձել ե բոլոր միջոցներով հաղթահարել կրիզիսը, մեղմացնել այն, կապիտալիստական յելք գտնել փակուղուց։ Նա այդ յելքը չի գտել։

Հիվանդ, փտող, մեռնող կապիտալիզմի բժիշկները — ամեն ձեռ ու գույնի սոցիալ-ֆաշիստները վոչ մի ջանք չխնայելով ոգնում են բուրժուազիային։ Սական սոցիալ-ֆաշիզմը կրիզիսի դեմ մղած պայքարում նույնքան անզոր հանդիսացավ, վորքան և ֆաշիզմը։

1931 թվի ամառն իր հետ բերավ կրիզիսի ամենասուր տափառվ և նրա՝ նոր շրջանի մեջ մտնելը։

Ագրարային կրիզիսով ուղեկցվող համաշխարհային արդյունաբերական կրիզիսին ավելացավ՝ արդյունահերական և ազրական բային կրիզիսի հողի վրա աճած վարկային-դրամական կրիզիսը։ Վերջինս մի շարք յերկրներում դարձավ վալյուտային կրիզիս։

Ինչպես և տնտեսական կրիզիսն ամրողությամբ վերցրած վարկային-դրամական կրիզիսը զարգանում ե անհամաշխափ, թրիչքներով։ Փորփրելով ամենից առաջ զաղութային և կիսագաղութային յերկրների վարկային սիստեմը, քանդելով հարավային Ամերիկային կախյալ յերկրների վարկի հիմքերը, նա Յեվրոպայում ամենից առաջ պայքեց։ Ավտոմագայում Ալբանիական կրիզիսը հասավ Պարտբանիային։ Հոգիսը առաջարկը,

վոր հույս ուներ կանխել այն, դատարկ կրակոց դուրս լեկավ: Վարկալին կրիզիսը պայթեց Գերմանիայում և ցնցեց ամբողջ կենտրոնական, Արևելյան և Հարավ-Արևելյան Յեղոպահն:

Խոշորագույն իմափերիալիստական յերկրները, — վոր ծվատ-վում եին հակասություններով, փորձում եին շահվել ուրիշ յեր-կրների կատաստրոֆայից, քաղաքական ու անտեսական շահ քամել իրենց սեփական տնտեսական սխտեմի ավերմունքից, — միմիանց հրում եին դեպի տնտեսական անդունդը:

Կենտրոնական և Արևելյան Յեղոպահյի վարկային կրիզիսն անցավ Անգլիա: Հուլիսից սկսած խոշորագույն իմափերիալիստա-կան յերկրը Անգլիան նրա դեմ անհաջող կրիվ եր մղում: Ֆրան-սիան ու միացյալ նահանգները Անգլիային ոգնություն հասցըին այն բանից հետո, յերբ իրենք անգլիական ֆինանսական սիս-տեմը հասցըին անդունդի ծայրին. բայց նրանք չկարողացան Անգլիային փրկել: Անգլիայում պայթեց վարկային կրիզիսը և դրա հետ միաժամանակ վայուտային կրիզիսը: Հենց դրանով վարկային կրիզիսը դառնում է համաշխարհային, ընդհանուր:

Նա դերեւ չի ճանկել Միացյալ Նահանգներին ու Թրանսիա-լին, բայց նրանք ել զգում են վորոտի ճայթյունը: Նա արդեն սկսում է ծավալվել Զվլիցերիայում և Հոլանդիայում: Նրա զար-գացումը կլինի անընդհատ: Մակայն միջազգային պարտազրերի շղթան կարտվում է այնքան տեղերում այնքան կարևոր և զգա-լի մասերում, -իսկ համաշխարհային կապիտալիստական տնտե-սության փոխադարձ կապերն այնքան սերտ են, - վոր միջազգա-յին վարկային կրիզիսն անխուսափելի է դարձել:

Վարկային կրիզիսն անխուսափելիորեն առաջ կրերի խոշոր ու խոշորագույն բանկերի, խոշոր ու խոշորագույն մոնոպոլիստա-կան միացումների հետագա մասսայական սնանկացումը: Կրեդի-տանշալին — Ավատրիայում, յերկու «Դ» բանկերը-Գերմանիայում (Գատանդ-բանկ և Դրեզդենի բանկ), կրեդիտ-բանկը-Վենգրիա-յում, Ռույալ Մելլը-Անգլիայում, նորվոլին և մոնոպոլիստական կապիտալիզմի մյուս հակաները-Գերմանիայում՝ ապացուցում են միջազգային ֆինանսական ոլիգոպրիայի ամենաառեղեղ ամրոց-ների խորտակման հնարավորությունը: Համաշխարհային բորսա-ներում արդեն քսիսում են այն մասին, թե Կրեդիտը պայթել ե, թե Ռույալ Դեյչը գտնվում է դժվարությունների մեջ, թե Շնեյդեր Կրեդիտն և Բանկ Դյունի Պարիզենը ներգրավված են միջն-յեղոպական սնանկացման ջրապուտի մեջ, թե Վենեսայի Ռուտ-շելդից հետո սնանկացման անդունդը կգլորվի Լոնդոնի Ռուտշելդը իսկ նրա հետ միասին նաև համաշխարհային առևտուրը ֆինան-

սավորող խոշորագույն բանկերը: Բավական ե թվել ֆինանսա-կան կապիտալի այդ հսկաները՝ իրեն հաշիվ տալու համար, թե վորքան խորն ե համաշխնրհային բորսաներն ընդգրկած «վըս-տահության կրիզիսը», պանիկան, գլխակորուսությունը և հու-սահատությունը:

Համաշխարհային կրիզիսի նոր շրջանը բնորոշ է նրանով, վոր աշնանացին սեղոնային սովորական աշխուժացում տեղի չի ունեցել վոչ մի խոշոր կապիտալիստական յերկրում: Ընդհակա-ռակը, վրա և հասել արդյունաբերական կրիզիսի նոր սրում: արտադրությունն ավելի ու ավելի կրծատվում է միացյալ նա-հանգներում, Գերմանիայում, Անգլիայում և, մանավանդ, Ֆրան-սիայում:

Համաշխարհային կրիզիսի նոր շրջանը ուղեկցվում է ադր-բարային կրիզիսի խիստ սրումով, վորն իր արտահայտությունն ե գտել գյուղատնտեսական մթերքների գների կատաստրոֆիկ կերպով անկման մեջ՝ բերքը հավաքելուց հետո:

Համաշխարհային կրիզիսի նոր շրջանն իր արտահայտու-թյունն ե գտնում բորսայական կրիզիսի չափազանց ուժեղ պայթյունի մեջ:

Արդյունաբերական կրիզիսի նոր տագնապ, ագրարային կրիզիսի սրում, վարկային կրիզիսի, վոր ընդհանուր և գարձել, վալյուտային կրիզիս, վոր բոնել և մի շարք յերկրներ, վորոնց թվում և խոշորագույններ, նոր բորսայական կրիզիս, — ահա թե ինչ տարբերից ե բաղկանում համաշխարհային տնտեսական կրի-զիսի նոր շրջանը: Միջազգային բուրժուազիան պանիկայով և բռնված՝ իր տնտեսական սիստեմի կրիզիսի ապագա չարեքի դիմաց, նրա կատաստրոֆիկ ցնցումների դիմաց:

Յերկու սոցիալ-տնտեսական սիստեմների պայքարում, կա-պիտալիզմի և սոցիալիզմի մեջ լեղած կովում՝ կապիտալիզմը նոր, ուժեղագույն պարտություններ ե կրում: Այն ժամանակ, յերբ կապիտալիստական աշխարհը ցնցվում է կրիզիսի նորանոր հարվածներով, նորհրդային Միությունում սոցիալիզմը տանում ե նորանոր հաղթանակներ:

Գործի են զցվում նոր կառուցված հսկաները, զարգանում և ամրապնդվում են սովորոներն ու խոլխողները գյուղական տնտեսության մեջ սոցիալիստական սեկտորը դարձել ե վճռող: Աճում են խորհրդային յերկրի արտադրական ուժերը, աճում և սոցիալիստական արտադրությունը: Պալքարելով աճման դժվա-րությունների դեմ, հաղթահարելով նրանց, մեր յերկրի պրոլետա-

րիատը հաղթանակ հաղթանակի հետեւից և տանում՝ 5-ամյակի էրականացման գործում:

Վստահ իր հաղթանակին, վստահ իր ապագային՝ մեր յերկրի բանվոր դասակարգը—միջազգային պրոլետարիատի հարվածային բրիգադն—ամբողջ աշխարհի աշխատավորներին ցույց է տալիս կրիզիսից յենելու միակ ճանապարհը:

Պրոլետարիատի հեղափոխական շարժումը կապիտալի յերկրներում և ազգային ազատազրական շարժումը գաղութներում վերելքի ճամբին են գտնվում: Աշխատավորների ամենալայն մասսաները ավելի ու ավելի համոզվում են կապիտալիզմի-վրապիս տնտեսական-քաղաքական սխստեմի սնանկության մեջ: Մասսաները պայքարի են յենում կրիզիսից դուրս գալու հեղափոխական յելքի համար:

(«Թրավրա» քերքի առաջնորդողը, 24/IX 1931 թ.):

Աջախտանի նյութ № 3.

ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՐԻԶԻՍ ԱՃՈՒՄ Ե

Հելֆերինդը „Ֆորտվերտս“-ի յերեկոյան հրատարակության մեջ գրում են „Յեթե ֆունտ ստերլինգի անկման հետեւանքով սկսված համաշխարհային վարկային կրիզիսի առաջը չառնվի, այն ժամանակ նա աներևակայի քաղաքական ու սոցիալական հետեւանքներ կունենա“:

Այդպիսի յեղրակացություն և հանում ստեղծված դրությունից միջազգային կապիտալի յերդվալ յերգիչը:

Նա կոչ և անում Ֆրանսիայի և Միացյալ նահանգների ֆինանսական կապիտալին՝ փրկելու միջազգային կապիտալիզմը: Պրոլետարական հեղափոխականը պրոլետարիատի միջազգային համերաշխության, կոչ և անում, իսկ Հելֆերինդը կապիտալիստների միջազգային համերաշխության և դիմում: Պրոլետարական հեղափոխականը կոչ և անում տապալել կապիտալիզմը, Հելֆերինդն ու նրա համախոհները կոչ են անում փրկել կապիտալիզմը: Պրոլետարական հեղափոխականները կազմակերպում են բանվորներին և վերջիններիս դեկավարությամբ կազմակերպում են աշխատավորներին կովելու խմբերիալիզմի դեմ: Այս ինտերնացիոնալի հերոսները փորձում են միջազգային բուրժուազիայի միասնական ճակատ ստեղծել կապիտալիզմը փրկելու համար:

Սակայն վոչ միայն սկազմակերպած կապիտալիզմ՝ չկա, այլ և տապալվում են միջազգային բուրժուազիայի՝ կրիզիսի դեմ կովելու նպատակով կազմակերպվող բոլոր փորձերը:

Վոսկու ստանդարտից յրաժարվելու առթիվ՝ համայնքների պալատում արտասնած իր ճառում Սնոռութենն ուղղակի դրամատիկան տոնով գանգատվել ե, թե Ֆրանսիան ու Միացյալ նահանգները մերժել են անդիմական կառավարության խնդիրը՝ իրեն նոր փոխառություն տալու անդիմական վարկային ու վայուտային սիստեմը փրկելու համար: Ֆրանսիան ու Միացյալ նահանգները, վորոնք վոսկու մեծ պաշարներ ունեն, նույնպես մերժել են անդիմական կառավարության առաջարկը՝ միջազգային կոնֆերանս հրավիրելու վոսկու պաշարները վերաբաժանելու համար:

Ֆրանսիական ֆինանսների մինիստր Ֆլանդինը Ազգերի կիգայի նստաշրջանում ուղղակի ծաղրի և յենթարկել նոր փոխառություններ տալու առաջարկությունները, իսկ ֆրանսիական պրեմյեր Լավալը Բերլին ճանապարփելուց առաջ բացարձակորեն հայտարարել ե, վոր ֆրանսիական փողի քսակնել ավելի պինդ կլապլի: Միացյալ նահանգների մամուլը չի թագնում, վոր գոլարը յեր կարող փունտ ստերլինգին ոգնությունն հասցնել վորովհետեւ „Միացյալ նահանգների դրամական շուկայի դրությունն այդ չի թույլ տալիս“:

Այդ ինտերնացիոնալի յերկու ամենալավ մասնագետները Հելֆերինդն ու Սնոռութենը զուր են աշխատել փրկելու փունտ ստերլինգը, վորը համաշխարհային վարկալին ու վալյուտային սիստեմի գլխավոր հիմքն ե: Ֆունտ ստերլինգը ցած և գլորվում է իր հետ կրիզիսի անդունդն և քաշում միջազգային վարկային սիստեմի ամբողջ բարդ ու նուրբ մեխանիզմը: Անդիմական գագես հետո Շվեյցարիան ու Նորվեգիան վերացրել են վարկա ստան դարտը:

Թե ի՞նչ ուղղություն է ստանում անդիմական ֆինանսական կատաստրոֆի ազգեցությունը համաշխարհային կապիտալիստական տնտեսության վրա, այդ արդեն պարզվում է հիմնական գծերով:

Ֆունտ ստերլինգի արժեքաղուրկ լինելը հարգած և հասցրել ամբողջ աշխարհի ամենազլիսավոր եմիսսիոն բանկերին: Տարբեր կապիտալիստական յերկրների դրամական միավորներն առանովված են յեղել վոչ միայն վոսկով, այլ և ոտարերկրյա վայուտայով, մանավանդ փունտ ստերլինգով վորի արժեքը վոսկու համասար եր համարվում: Ֆրանսիական բանկն իր սելֆերում 1,6 միլիարդ վոսկի ոուրելու անդիմական վալյուտա և պահում: Միացյալ նահանգների ֆեդերալ բանկի սելֆերում, Հոլանդիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Ավ-

ստրիայում, Գերմանիայում և այլ պետություններում, չենք խոսում դեռևս Բրիտանական գովինդունների ու գաղութների մասին, նույնպես ահազին գումարներ են դիզվել ֆունտ ստերլինգներով: Բրիտանական իմպերիալիզմի աֆրիկական գաղութներում, Հոնդ-Կոնգում, Մալայան շտատներում վայրուտային ու փողային սիստեմը հենցված ե ֆունտի կայունության վրա: Ֆունտի գինն ընկնելը մի հարվածով քայլքայել ե բրիտանական իմպերիալիզմի խոշորագույն գաղութի-Հնդկաստանի ամբողջ փողային սիստեմը: Ֆունտի կայունության ցած է գլորվել և ուղարկվել:

Վարկային կրիզիսի հետևանքով մի շարք յերկներում վարկն արդեն թանգացել ե, գեղջի դրույքը բարձրացել ե: Կասկած չկա, վոր Անգլիային, Շվեդիային Նորվեգիային, Դանիային, Գերմանիային, Ավստրիային, Վենգրիային, Հարավ-Սլավիային, Հնդկաստանին և այլ հետևեն և ուրիշ յերկներ: Զեղջի գրույքի բարձրացումն այն ե արտահայտում, վոր վոսկու և ազատ դրամական կապիտալների համար տարվող կոփվը սրվել ե: Վարկի թանգանալը վատացնում ե արդյունաբերության, առևտի, տրանսպորտի դրությունը, արագացնում ե մասսայական սնանկությունները:

Անգլիան համաշխարհային արտաքին առևտրին ֆինանսները տվող գլխավոր բանկերին՝ համաշխարհային առևտուրը դեռևս իր ֆինանսների 60%-ը ստանում եր Լոնդոնից: Նավագնացության և ապահովագրման գործի համաշխարհային ֆինանսավորումը նույնպես գտնվում եր Լոնդոնի Սիտիի ձեռքին, Անգլիական „ակցիալիտային տները“ (այն բանկերը, վորոնք ապրանքի դիմաց վարկ են տալիս, ապրանքային մուրհակները վերապեղի են յենթարկում) և բանկերը տիրել են այդ ասպարեներում: Նյու-Յորքը միայն կոփի եր սկսել անգլիական կապիտալն այս ասպարեներից դուրս քշելու համար: Փարիզը միայն առաջնային յերկնության համար է առաջին յերկնության նախապատրաստական քայլերն եր առում: Ցեղ յեթե դատենք այն հիման վրա, թե ինչ արձագանք ե տվել համաշխարհային բուրժուական մամուլը ֆունտի տապալմանը, միանգամայն կպարզվի, վոր բուրժուական տնտեսագետները չեն ել պատկերացնում, թե ինչպես փոխարինեն Անգլիան այդ ասպարեներում: Արտաքին առևտրի, նավագնացության, ապահովագրման գործի նորմալ ֆինանսավորումը խախտված ե:

Բոնկված վարկային կրիզիսի հետևանքն այն ե յեղել վոր ամեն մի կապիտալիստական յերկիր դուրս և հանում ուրիշ յերկներից կարճ ժամանակով տված իր վարկերը, փորձում ե մոռեիլզացիայի յենթարկել յերկար ժամանակով ներդրած իր կա-

պիտալները, հետ ե շպրտում արտասահմանյան ակցիոներն ու պետական որլիգացիաները, կապիտալի արտահանումը դադարեցնում ե կամ մինիմումի ե հասցնում: Զգտելով ինքն իրեն փրկել ամեն մի կապիտալիստական յերկիր հետ ե պահանջում ուրիշ յերկրներում գտնված իր կապիտալները: Ահազին կապիտալներ գանձ են դառնում: Լիակատար քայլքայման ե յենթարկել համաշխարհային դրամական շուկայում կապիտալի նորման շրջանառությունը, վորը դրանից առաջ արդեն խախտված ե յեղել ունապարհաների և միջազգային պատերազմական պարտքերի ծանրության տակ ու ցնցված ե յեղել մէլիարդավոր վարկեր ոթթու դնելով՝ Գերմանիայում, Ավստրիայում, Վենգրիայում և Հարավային Ամերիկայի յերկներում:

Միաժամանակ մի շարք ամենազլիսավոր կապիտալիստական յերկների ներքին դրամական շուկաներում ուժեղադնում ե բանկերից ու խնայողական դրամարկղներից խուճապով ավանդներ հետ վերցնել թղթադրամներից փախչելը, վոսկին տանը թագցնելը և գինը կորցնող պետական որլիգացիաներից դեպի նյութական արժեքները փախչելը: Կարենորագույն կապիտալիստական յերկների ներքին շուկաներում խախտվում ե կապիտալիստական վարկի նորմալ գործողությունը:

Անգլիան հատուկ դիրք ե դրավում համաշխարհային շուկայում: Անգլիան պարենի խոշորագույն գնող ե հանդիսանում վորովնետեկ իր յերկրում նա համարյա թե սեփական գյուղատնտեսություն չունի: Այս տեսակետից Միացյալ նահանգները, Գերմանիան, Ֆրանսիան անհամեմատ ավելի լավ դրության մեջ են գտնվում: Անգլիան հումույթի խոշորագույն սպառող ե հանդիսանում: Քարածուխի բացառությամբ՝ Անգլիան ներմուծում ե ազգունաբերական հումույթի բոլոր տեսակները, վերջին տարին ներս նույն խոկ յերկաթ ե ներմուծում:

Անգլիան խոշորագույն սպառող ե: Նա ցորեն ե ներմուծում կանագայից, Ավստրալիայից, Արգենտինայից, Միացյալ նահանգներից, յուղ և կաթնամթերք ե ներմուծում նոր Զելանդիայից, Ավստրալիայից, Դանիայից, Ֆինլանդիայից, յերկաթահանք ե ներմուծում Շվեդիայից, Սպանիայից, Բնելգիայից, գինիներ ե ներմուծում Փորթուգալիայից, Սպանիայից, Դանիայից, Ավստրալիայից, Միացյալ նահանգներից: Շվեդության առարկաները տաւալիս ե Ֆրանսիան, բամբակ-Միացյալ նահանգները, Յեգիպտոսուն ու Հնդկաստանը, սուրճը Բրազիլիան, Հարավային Ամերիկայի այլ յերկները և այլն:

Ֆունտ ստերլինգի արժեքաղուրկ լինելը նշանակում է, վոր Անգլիայի, վորպես գյուղատնտեսական միերքների հումույթի և պատրաստի ֆարբիկատների գնողի՝ դերը փոքրանալու և նույն իսկ առանց մաքս մտցնելու: Իսկ Անգլիայում մաքս մտցնելը Անգլիայի ներմուծման համար ել ավելի մեծ դժվարություններ կատեղիք: Կրիզիսի հետևանքով արդեն սղմված համաշխարհային շուկան ել ավելի կսեղմի:

Ֆունտ ստերլինգի արժեքաղուրկ լինելը անխուսափելիորեն բանվորների ռեալ աշխատավարձի խիստ անկում և առաջ բերում: Սոցիալական որենսդրության համաձայն արվող ծախսերը փաստորեն կրճատվում են: Անգլիական արդյունաբերողները լի են այն հուսով, վոր ինֆլյացիայի ճանապարհով առաջ յեկածինքնարժեքի պակասումը համաշխարհային շուկայում կավելացնի անգլիական ապրանքների մրցման ուժը: Այդ հանգամանքն ուժից յերկրների բուրժուազիայի մեջ տագնապ և առաջացնում: Խտական արդեն ավելացրել և մաքսը 15 տոկոսով: Գերմանիայում արդեն տագնապ և առաջացել անգլիական արտահանման ուժեղանալու անթիվ, Ֆրանսիայում խուճապ և, վորովհետեւ ֆունտ ստերլինգի արժեքաղուրկ լինելը կուժեղացնի Անգլիական մրցում այն ժամանակ, յերբ Գերմանիան աներևակայելի ճիգեր և թափում ուժեղացնելու իր արտահանությունը: Ինքը Ֆրանսիան գերմանական ներմուծման դեմ մի շարք միջոցներ և ձեռք առել: Շվեյցարիայում բացառիկ միջոցների գործադրություն և սպասվում: Շուկաների համար տարվող կոփը սրվում է, մաքսային պատճեններն աճում են:

Համաշխարհային շուկայում ապրանքների շնորհմալը շրջանառությունը դնալով ավելի և դժվարնում: Համաշխարհային շուկայի քայլացում ուժեղանում է, խոշորագույն իմպերիալիստական յերկրների միջև պարարը խորանում է:

Այս այն հիմնական մոմենտները, վորոնք վորոշում են անգլիական ֆունտի տապալման աղղեցությունը համաշխարհային տնտեսության վրա: Խոսք չկա, վոր այս դեպքը՝ բրիտանական սազմական նախատեսմում տեղի ունեցած շարժման հետ միասին՝ ահազին հետևանք և ունենալու նաև բրիտանական կայսրության ներսում: Անգլիայի և դոմինիոնների հարաբերությունն արձատապես փոխվում է: Բրիտանական իմպերիալիզմի գաղութներն ու կիսագաղութները տասնապատիկ չափով կրում են բրիտանական կրիզիսի բոլոր բացասական հետևանքները: Հնդկաստանում արդեն վրդովմունք ու բողոք և աճում բրիտանական իմպերիալիզմի ոգտին յերկիրը թալանելու դեմ՝ ոռոպին արժեքաղուրկ անելու միջոցով:

Անգլիական իմպերիալիզմը ճնշել ու թալանել և իր գաղութները, հենվելով, ի միջի այլոց, իր սաղմական և իր ֆինանսական ու տնտեսական հզորության վրա: Ֆունտ ստերլինգն ու ռազմական նավատորմը—բրիտանական հզորություն այս յերկու հիմքերը—ջլատված են, արդյունաբերությունը փառում է:

Անգլիայի ներսում բրիտանական իմպերիալիզմը գաղութային գերշահի հաշվին փշրանքներով կաշառում եր բանվոր գասակարգի վորոշ խավերին—բանվորական արիստակարատիային: Ոպորտունիզմը, սոցիալ-իմպերիալիզմն Անգլիայում բուսել են այդ հողի վրա: Մակդոնալդները, Հենդրանները, Մեքստոնները գաղութային գերշահի փշրանքներով սնված այդ ոպազորտունիզմի, սոցիալ-իմպերիալիզմի իդեոլոգներն են: Այժմ բրիտանական զառամբալ ոպազորտունիզմի սոցիալական հիմքը քանդվում է:

Նախատրումում յեղած շարժումը, Լոնդոնում, Դիվերգում, Կիվերպրուտմ, Դլազգոյում տեղի ունեցած ցույցերը, բանվորների համառությունը մասնակի դործագուլների ժամանակ, ճասաների ակտիվության արագ աճումը,—այս ամենը նոր շրջան են բաց անում Անգլիայի բանվորական շարժման զարգացման մեջ: Անգլիական բուրժուազիայի և պրոլետարիատի մեջ յեղած դասակարգային պայքարը և գաղութներում բրիտանական իմպերիալիզմի դեմ ուղղված ազգային—ազատագրական պայքարը յենում են ավելի բարձր աստիճանի:

Մեր աչքի առաջ ծավալվում ե խոշորագույն իմպերիալիստական յերկրի մահացու կրիզիսը: Համաշխարհային վարկային կրիզիսն աճում է: Դա կապիտալիստական սիստեմի ընդհանուր կրիզիսի ամենալավ վկայականն է:

(«Պրավդա» թերթի 31 թ. 29/X առաջնորդողը).

Մօակման նյութ № 4.

ՄԱՆՁՈՒՐԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԿԿՈՒԹԱՑԻԱՆ

Յապոնական իմպերիալիզմը յելք և փնտրում այն կրիզիսից, վորը ցնցել և Յապոնիայի տնտեսության հիմունքները: Յապոնական բուրժուազիան ու կալվածատերերը և աշխատավորության վրա նրանց իշխանությունը մարմնացնող ռազմա-բռուրուկատական միավետությունը անհաջող կերպով աշխատում են լուծել յապոնական իմպերիալիզմի կրիզիսը: Այդ կրիզիսը չափազանց խորն և ու սուր: Մոնոպոլիստական կապիտալիզմը Յապոնիայում աճել և գլխապտույտ տեմպերով: Միայն մի քանի արժեքաղուրկ անելու միջոցով,

տասնյակ տարիների ընթացքում Յապոնիան միջնադարյան ֆեո-
դալական կարգերից թռիչք և գործել ու հասել կապիտալիզմին
ու իմպերիալիզմին:

Հինգ հակայական տրեստներ տիրում են յերկրի տնտեսու-
թյանը և վորոշում են նրա քաղաքականությունը, բայց իրոք
դրանցից յերկուսն են վճռական դեր խաղում—Միջուին և Մի-
ցերուշին:

Յապոնական աշխատավորության վրա շատ թանգ և նստում
իմպերիալիզմի արագ զարգացումը Յապոնիայում: Աճել են ար-
դյունաբերությունը, բանկերը, յերկաթուղիները, նավագնացու-
թյունը, աճել են հակայական տրեստները, բայց գյուղը շարու-
նակում և հեծել ֆեոդալական ու կիսաֆեոդալական կոխման լծի
տակ: Յապոնական գործարաններում աշխատավարձը յերեք-չորս
անգամ ավելի ցածր և քան յելլուպական գործարաններում: Բան-
վորական որը դժոխային յերկարություն ունի:

Սակայն յապոնական իմպերիալիզմն աճել և վոչ միայն
յապոնական բանվորների ու գյուղացիների մուից, արյունից ու
վոսկորներից: Նա աճել և նաև գաղութային թալանի ճանա-
պարհով:

Յապոնական իմպերիալիզմի աճման հիմնական աղբյուրնե-
րըն են յապոնական պրոլետարիատի կատաղի շահագործումը,
յապոնական գյուղացիության կիսաֆեոդալական ու ֆեոդալա-
կան կեղեքումը, Զինաստանի, Կորեյայի, Ֆորմոզայի իմպերիա-
լիստական թալանը:

Յապոնիայի հակայական տեքստիլ արդյունաբերությունն
աճել և առանց յրկորում բամբակային բազա ունենալու: Մետա-
ղաքործությունը հակայական չափերով աճել և, իսկ յրկորում բա-
վարար քանակությամբ յերկաթահանք չկա: Ներքին շուկան չա-
փազանց նեղ և, բանվորի կյանքի կիսաստրկական մակարդակը և
գյուղացու ֆեոդալական կեղեքումն ել ավելի են նեղացնում աչդ
շուկան: Առևտրական բալանսի պասսիվությունը հաղիլ և ծած-
կվում գաղութների թալանով:

Տնտեսական կրիզիսը դաժանորեն տիրում և Յապոնիայում
և նրա ուժն ավելի ու ավելի և սաստկանում: Արդյունաբերու-
թյան մանածացին, քիմիական, մետաղաձուլական, մետաքսային
և այլ ճյուղերն ավելի ու ավելի են կրաքառում իրենց արտա-
գրությունը: Արտաքին առևտուրը ներքինի հետ միասին նվա-
զում և Յենի (դրամական միավոր) գվարությամբ վերականդ-
նած վոսկի ստանդարտը տատանվում է:

Իմպերիալիստական պետությունները, մանավանդ Միացյալ
Նահանգներն ու Անգլիան, կատաղի կոփիվ են մղում յապոնական
իմպերիալիզմի դեմ հեռավոր-արևելյան շուկաներին տիրելու և
գաղութային գերշահ ստանալու համար: Անդարձորեն անցել և
պատերազմական և հետպատերազմական այն կոնյունկտուրան,
յերբ յապոնական իմպերիալիզմը համարյա առանց մրցակցի քեզն
ուղածին պես տիրել և արևելյան շուկաներին: Յապոնական իմ-
պերիալիզմն ընկել և անլուծելի ներքին ու արտաքին հակասու-
թյունների մեջ:

Այս պայմաններում Մանջուրիայի ուազմական գրավումը
յապոնական իմպերիալիզմի կողմից մի փորձ և գուրս գալու իր
ներքին ու արտաքին հակասություններից: Մազմական գրավու-
մը տարածվում և նորանոր տերրիտորիաների վրա: Յապոնական
իմպերիալիստաների բանակում յեղած զանազան կիրաների ու
խմբակների վոչ մի ընտանեկան տարածականությունն ու վեճը
չեն փոխում այն հիմնական ու վճռական փաստը, վոր տիրող
շրջանները կողմնակայից են Մանջուրիայի ուազմական գրավման,
կողմնակայից են յապոնական զինվորականների անզուսպ քայլե-
րին, չինական ժողովրդի սուվերեն իրավունքների վոտնահա-
րելուն:

Յապոնական իմպերիալիզմն իր յելույթն արդարացնում է
հիմնվելով «որինականության», «իրավունքի», «ինքնապաշտպա-
նության» վրա: Բայց ինչ որևէքով կարելի և որինական գարձ-
նել ոտար յերկրի տերրիտորիայի անպատկառ գրավումը, յերկա-
թուղիների և բանկերում յեղած միջոցների յուրացումը:

«Իրավունքի» և նման բաների վրա հիմնվելը վոչ այլ ինչ
է, յեթե վոչ խափուսիկ քողարկում այն հիմնական փաստի, վոր
յապոնական իմպերիալիզմը վորոշել և հրով ու սրով ոտար յեր-
կրում ձեռք բերել այն, ինչ վոր իրան չի պատկանում, լիակա-
կրում ձեռք բերել այնտեղ: Վոչ մի խոսք չի ողինի ծածկելու այն
փաստը, վոր ներկա դեպքում մեր առաջ կանգնած և ոտար տեր-
րիտորիայի խնամքով նախապատրաստված գրավումը:

Յապոնական իմպերիալիստական աղբյուրիան նախապատ-
րաստվել և վաղուց և պլանաշափ կերպով: Յապոնական, բան-
վորների ու գյուղացիների դեմ ուղղված վոստիկանական տեր-
րորի ուժեղացումը, նոր արտակարգ որենքները «վտանգավոր
մաքերի» դեմ, բանվորական գործիչների մասսայական ձերբա-
կալությունները Յապոնիայում, պրովոկացիան վանալան Զժա-
նում, չինացիների դեմ ուղղած ջարդերը կորեյալում, կապիտան
Նակամուրի սպանության գործի առթիվ ուղցրած կամպանիան,

Հուսիսային Զինաստանում զեներալական բոլորքումը, կանունի կառավարության թշվառ մարիսնետների հետ կատարած խաղը, —այս բոլորը ուղմական ոկկուպացիայի նախապատրաստման շղթայի առանձին ողակներն են լեռել:

Մազմական գրավումը կատարվում եւ չինական ու յապոնական տշխատավորությունն ավելի ևս սարկացնելու նպատակով: Նա կատարվում եւ նոր կոնցեսուիաներ ձեռք բերելու և իմպերիալիստական կողոպուտը Զինաստանում ուժեղացնելու համար:

Ազգերի լիդան բացարձակապես մերկացնում եւ իրեն, վորապես պատերազմի գործիք և կազմակերպող, բացարձակապես հանդես եւ գալիս, վորապես թույլ ու կեղեցվող ժողովուրդներին կողոպտելու, ձնշելու և արյան մեջ խեղդելու գործիք ու կազմկերպիչ: Նույն իսկ Ազգերի լիդայի ամենախայտառակ շահատակություններով էի պատմությունը հազիվ թե ավելի ցինիկ ավելի բացահայտ և ավելի զգվելի ծաղրանք իմանա, քան նրա վորոշումն եւ Մանջուրիայից զորքերը դուրս հանելու մասին, «յեթե դա չի վտանգի յերկու կողմերի քաղաքացիների կյանքն ու ունեծվացքը»: Իմպերիալիստների, դրանց թվում նաև յապոնական իմպերիալիստների թեղիսը «քաղաքացիների կյանքի և ունեցվացքի պաշտպանության մասին»—դա գրավման, կողոպուտի բռնության և ինտերվենցիայի թեղն ե, վոր սկզբունք և դարձված: Ազգերի լիդայի վորոշմանը կարող և հավասարվել միայն յապոնական կառավարության պատասխանը:

Միջադրային իմպերիալիզմի ժընկի գործիչները սովորաբար աշխատում են Ազգերի լիդայի իմպերիալիստական եյությունը քողարկել պացիֆիստական ֆրազներով: Ներկա դեպքում նրանք դեն են շպրտել իրենց դիմակները և ցուց են տալիս լիդայի իմպերիալիստական եյությունն իր ամբողջ անձունի մերկությամբ: Դրանով նրանք տուջի ծառայություն են մատուցել լիդայի սոցիալ-ֆաշիստական և մանր-բուրժուական-պացիֆիստական յերգիչներին:

Այս, Ազգերի լիդայի նիստերում անկեղծ տագնապ և նըկատվում: Այս, Ազգերի լիդան պատրաստվում եւ Մանջուրիայի բռնագրավման առթիվ հանձնաժողով նշանակել: Բրիտանական իմպերիալիզմի յերդլյալ ատենակալ «ազգային» կառավարության ներկայացուցիչ լորդ Սևենիը չի թագցնում իր յերկուողը յապոնական իմպերիալիզմի յելույթի առթիվ: Չե վոր բրիտանական իմպերիալիզմը ևս «հատուկ շահեր ու իրավունքներ» ունի Զինաստանում: Չե վոր բրիտանական իմպերիալիզմը ևս կատա-

ղի կոիվ եւ մղում չինական ավարի համար: Զուր չե, վոր Տոմսոնի հանձնաժողովը հենց նորերս զեկուցել եւ այն մասին, թե յապոնական կապիտալը դուրս եւ մղում Զինաստանից անգլիականին, և սի շարք միջոցներ եւ առաջարկել հականարձակում կատարելու համար:

Ազգերի լիդայի իմպերիալիստները փորձում են խառնվել Մանջուրիայի հարցին, վորպեսզի դուրս կորպեն ավարի մի մասը: Միայն այդ մասին եւ խոսքը, յերբ Ազգերի լիդան քննում եւ «մանջուրական հարցը»:

Միացյալ Նահանգները Կելլոգի պայմանագրի նախաձեռնողներն են յեղել: Այդ պայմանագրը մի ավելորդ անգամ յերեան և յեկել վորպես պատերազմի արդարացում: Այն ժամանակ, յերբ յապոնական բանակը ոմքակոծում եր Մուկենը, զինաթափ անում չինական գորքերին, յերբ նա քեփն ուզածին պես, ինչպես նվաճող տերությունն եր անում ոտար յերկրում, գրավելով ահագին տերրիտորիաներ, Միացյալ Նահանգների կառավարությունը հայտարարում է, վոր «Կելլոգի պայմանագրը չի խախտված»: Վոչ մի կեղծավորություն այս սահմաններից դեն անցնել չի կարող:

Ինչպես եին Կելլոգի պայմանագրը գովարանում ամերիկական իմպերիալիզմի պոչ սոցիալ-ֆաշիստներն ու պացիֆիստները: Վորքան պացիֆիստական դատարկախոսություն եր շռայլվում պայմանագրի մասին, վորն «անհնարին եւ դարձնում պատերազմը, վորպես ազգային քաղաքականության միջոց»: Իսկ այժմ հենց Միացյալ Նահանգները մերկացնում են Կելլոգի պայմանագրը վորպես պատերազմի և գաղութային կողոպուտի արդարացում:

Միացյալ Նահանգների կառավարությունը Զինաստանի դրությունը համարում եւ «տարակուսանք առաջացնող» դրություն և Յապոնիային մեմորանդում և ուղարկում, վորովհետեւ ամերիկական բուրժուազիան ցանկացել եւ այժմ ել ցանկանում և Զինաստանը դարձնել իր կիսազարությը: Միացյալ Նահանգները նոր համաշխարհային պատերազմի են պատրաստվում և աղաջ ովկիանոսում: Միացյալ Նահանգները պատերազմ են պատրաստում աշխարհը նորից բաժանելու համար, գաղութները վերաբաժանելու համար: Միայն այդ պատճառով են անհանգստանում վաշինգտոնում Զինաստանի գեղերի առթիվ: Միայն և միմիայն այդ պատճառով են Միացյալ Նահանգները մեմորանդում ուղարկել Յապոնիային:

Գոմինդանի հականեղափոխական կառավարությունն արդեն փորձում է չինական աշխատավորության հաշվին համաձայնության գալու յապոնական իմպերիալիզմի հետ։ Զան-կայ-Շին բուտափորական ֆրազներ և արտասանում Սուն Ցզե-Վենը լիզում ե յապոնական գեներալների կոշիկները, իսկ Զժան Սյուե-Լյանը շտապ կերպով ցած ե դնում ոկուպանտների առաջ իր զենքերը։ Իր ամբողջ քաղաքականությամբ, աշխատավորության դեմ մղած իր պատերազմներով, իր կապիտուլյացիայով՝ իմպերիալիստների հանդեպ Գոմինդանը չինական ժողովրդին հասցրել և ամենամեծ ազգային ստորացման։

Սովոր, աղքատություն, ստորացում, իմպերիալիստական բռնություն, ինտերվենցիա, ռազմական գրավում, յերկրի բաժանում, — ահա Գոմինդանի քաղաքականության հետևանքները, Գոմինդանի, վոր չինական բուրժուազիայի և կարվածատերերի հականեղափոխական բլոկի կուսակցությունն ե հանդիսանում։ Գոմինդանը մահվան ե մատնում այն կոմունիստներին, վորոնք յապոնական գործարաններում գործադրուներ են կազմակերպում։ Գոմինդանը բոլոր իմպերիալիստներին հրավիրում ե կովկլու չինական խորհուրդների և նրանց հաղթական բանվորա-գյուղացիական կարմիր բանակի դեմ։

Միայն մի ուժ կա, վոր ընդունակ ե վերջ տալու իմպերիալիստների բռնությանը Զինաստանի աշխատավորության նը-կատմամբ։ Դա Զինաստանի բանվուա-դյուղացիական հեղափոխական հաղթանակն ե չինական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Ահա մի քանի տարի ե, վոր Զինաստանի բանվորներն ու գյուղացիները հաջողությամբ զինված կոիվ են մզում իմպերիալիզմի և Գոմինդանի դեմ։ Այժմ, յերբ յապոնական իմպերիալիզմը փորձում ե չինական ժողովրդի հետ իր հաշիվը քաշել, ամբողջ աշխարհի բանվորները վոտքի են կանգնում պաշտպանելու չինական հեղափոխությունը։

Խորհրդային Միության աշխատավորները մեծագույն ուշադրությամբ հետևում են Զինաստանում տեղի ոլնեցող կովկին։ Նրանց համակրանքը չինական ժողովրդի կողմն ե։

(«Պրակա», 25/IX—31 թ. Առաջնորդող)։

Աչխատանքի նյութ № 5.

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՃԱԿԱԾԱՐՏԵՐԻ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիայում կատարվող գեղաքերն իրենց վրա են գրավում ամբողջ միջազգային բանվոր դասակարգի ուշադրությունը։ Ահա տասը տարուց ավել ե, ինչ Մած Բրիտանիայի բանվորական տարբան մեջ հասունանում ե համաշխարհային պատմական նշանակություն ունեցող մի բեկում։ Այժմ այդ բեկումն սկսվել ե նակություն ունեցող մի բեկում և վոստիկանության հետ ունեցած Դասակարգային ցուցցերի և վոստիկանության հետ ունեցած ընդհանուր բանվոր գասակարգն աղատություն մեջ բանվոր գասակարգն աղատությունների ու կուլտների մեջ բանվոր գասակարգն աղատություն իլլուզիաներից՝ պարլամենտական դեմոկրատիայի մասին, աղատվում ե պարլամենտական «ոպպոզիցիայի» և տրեկունիոնների պարագլուխներին հավատ ընծայելուց։ Դրա մեջ ե կայանում Սնդիհայում տեղի ունեցող գեղաքերի իմաստը։

Առաջին և յերկրորդ «բանվորական» կառավարությունների փորձը և «արդյունաբերության մեջ խաղաղության» քաղաքականությունը (պրոֆմիությունական բյուրոկրատիայի և գործատերերի միասնական ճակատը բանվորության դեմ) մասսաներին շատ բան են սովորացրել։ Այն շրջանը, յերբ բուլժուազիայի հանձնարարությամբ իշխանությունը դաշնայի և յերկրորդ «բանվորական» կառավարության ձեռքին, յեղել ե ամենաղաժան տնտեսական կրիպտոսի շրջան։ Բանվորական մասսաները տեսել են, վոր կառավարությունը բուլժուազիայի դեմ, վորը փորձել ե կրիպտոսի ծանրությունը պարզել պրոլետադյուղի, վորը փորձել ե կրիպտոսի ծանրությունը պարզել պրոլետադյուղի, Հենց բուլժուազիայի ընդհանուր խոստվանությամբ այդ կառավարությունն ամենալավ գործիքն ե յեղել կաթյամբ այդ կառավարությունն ամենալավ գործիքն ե յեղել կապիտալի հարձակումը բանվորական դասակարգի դեմ առաջ տանելու համար։

Մանածային արդյունաբերության բանվորների և հանքագործների 1930—31 թ. ուժեղ գործադրուների միջոցով բանվորական մասսաներն ըստ երթյան բռնեցին կովկի այն ճանապարհը, վորն ուղղված եր «բանվորական» կառավարության դեմ։ Վեմբերլենդի, Շոտլանդիայի, Հարավային Ուելսի հանքագործական ների գործադրուները նախագուշակում են, վոր անգլիական պրոլետարիատի հեղափոխական դասակարգային մեծ կուլտների արշալուսը մոտենում ե։

Բանվոր դասակարգը փորձով համոզվում եր, վոր «բանվորական» կուսակցության կառավարության և նախկին բուլժուազիան կառավարությունների մեջ եյական տարբերություն չկա-

թե սրունք և թե նրանք գործում են բանվոր դասակարգի դեմ, իջեցնում են նրա աշխատավարձն ու կենսական մակարդակը և նրա համար պարտություն են պատրաստում:

1926 թվին «բանվորական» կուսակցությունն ու պրոֆմիությունները նախապատրաստեցին հանքագործների ընդհառու գործադուլի պարտությունը: Յրկրորդ կոչի «բանվորական» կառավարությունը պղոփմիությունների ուժորմիստական ղեկամրության հետ միասին 1930—31 թ. իջեցրավ մանածագործների, անքաղըների, յերկաթուղալին աշխատողների և այլն աշխատավաճառ: Այսուհետեւ այն նույն կառավարությունը առաջին անգամ պակասացրեց գործազուրկներին տրվող նպաստը, վերջապես, մեյի հանձնաժողովի առաջարկությամբ, «բանվորական» կառավարությունը պատրաստվում էր կես միլիարդ վուկի ոռուբլու մենադաժան «խնայողության միջոցները» գործադրել բանվորների և աշխատավորության հաշվին:

«Բանվորական» կուսակցությունն ու պրոֆմիությունների գլխավոր խորհրդի գործիչները շատ լավ հասկանում եին վորկողությունի այս ծրագիրը անխուսափելիորեն կցնցի Անգլիայում սոցիալ-ֆաշիզմի շենքը, վորն առանց այն ել սկսում եր տատանվել: Անգլիական ըուրժուազիան իր հերթին նույնպես հասկացել է, վոր իր շահերը թելադրում են բանվորական շարժման մեջ յեղած իր ագենտների բանակում դերերը վերաբաժանել: Այսուելց առաջ և յեղել «ազգային» կառավարություն Մակդոնալդի գլխավորությամբ և կառավարության դեմ նոր «ուպազողիցիան» չենդերսոնի գլխավորությամբ: Այսպես եին բաժանված դերերը՝ բանվոր դասակարգի հաշվին «խնայողության միջոցները» գործադրելու համար:

«Մակդոնալդը վրկեց ազգը» Հենդերսոնը վրկեց բանվորական կուսակցությունը, վորպեսզի հետագայում վրկի ազգը»—այդպես վորոշեց լեյբորիստական լորդ Սենկին այն վոփիսությունը, վոր կատարվել և «բանվորական կուսակցության մեջ:

Սակայն «բանվորական» կուսակցության ղեկավարների մանեվրները չթեթեացրին անգլիական կապիտալիզմի կրիվիսը: Դուրս լեկալ, վոր կրեղիսն ավելի լուրջ ե, իսկ բանվորական մասսաները փորձից ավելի են դաս առել, քան սպասում եին «բանվորական» ղեկավարները: Ահա թե ինչու, չնայած լեյբորիստների արած ամբողջ դեմագոգիային «ուպազողիցիայի» ձեռնարկած մանեվրը չհաջողվեց:

Դեռևս մինչև վոսկի ստանդարտի վերացնելը ամբողջ յերկրում կամունիստական կուսակցության ղեկավարությամբ ան-

ցավ հզոր մասսայական ցուցերի հոսանքը, վորին ուղեկցում եին վոստիկանության հետ լեզած կոփիլները: Բանվորական շարժման հորձանքին կոնդոնում, կիվերպում, Գրազգոյսմ, Դենդիում միացավ Ատլանդյան նավատորմի պատմական յելուկթը, վորը ցույց ավավ, թե կապիտալիստական խարիզմա եկոնոմիկան լերեան և գալիս դասակարգային հարաբերությունների ամբողջ գծով, կումմունիստական կուսակցությունը համարձակորեն կանգնեց մասսաների գլուխը և յերօրիսաներին հակադրեց կրիկանցից հեղափոխական ճանապարհով գուրս գալու ծրագիրը:

Սիխեմում արտասանած իր ճառի մեջ Մակդոնալդն իրեն հայտարարեց «Բրիտանական կայսրության բժիշկ»: Այս բառերի մեջ արտահայտված և անգլիական սոցիալ-ֆաշիզմի գերը: Սամեջ կայն բանվորական գասակարգը կապիտալիզմի բժշկող չեց այլ նրա գերեզմանափորը:

«Վոչ մի կոպեկ բանվորներից, գործազուրկներից, նավատախներից, զինվորներից, ուսուցչներից»: «Բանվոր դասակարգի կոմիտենական ճակատ»: «Թող կորչի ազգային» կառավարությունը:—Ահա անգլիական բանվորական մասսաների լոգունությունը, վորոնցով նրանք փողոց դուրս յեկան ի պատասխան կապիտալի և սոցիալ ֆաշիստների հարձակման:

Դլխավորելով մասսաների շարժումը, կոմունիստական կուսակցությունն սկսեց մերկացնել և այժմ ել մերկացնում և «ոպպազիցիայի» մանեվրը՝ Մակդոնալդի և Հենդերսոնի մեջ տեղի ունեցած աշխատանքի բաժանումը:

Հենդերսոնը փորձրւմ է փրկել դրությունը: Լեյբորիստական կուսակցության 31-րդ տարեկան կոնֆերանսում, վոր այժմ տեղի ունի Սկարբորոյում, բանվոր դասակարգի դավաճանները լուս են իրենց հանցագործությունների մասին՝ բանվոր դասակարգի հանդեպ: Կոնֆերանսի տեղը՝ Հենդերսոնը ամենաչնչին քննադատություն անդամ թույլ չի տալիս «բանվորական» կուսակցության ու նրա կառավարության գործունեյության մասին: Առանց քաշվելու նա առաջուց փակում է ամեն մի համարձակի» բերանը, ով վոր փորձում է «հինը ըրքըել»:

Բանվորական կուսակցության Սկարբորոյի համագումարը բուրժուազիյաի ազենտուրավի տիպիկ նախընտրական մանեվրն է պրոլետարիատի բանակում: Փորձելով հետքերը թագցնել, «բանվորական» կուսակցության ղեկավարները քննադատում «բանվորական» կուսակցության ղեկավարները, ամեն կերպ սկսելով յերեին «ազգային» կառավարությունը, ամեն կերպ սկսելով յերեկորդը «բանվորական» կառավարության հանցագործությունները, կրորդ «բանվորական» կեղծավոր բանաձեներ եին ընդունվում սոցիալիզմ Մակդամանակ կեղծավորը բանաձեներ ան-

ժի, սոցիալական որենսդրության, արդյունաբերության հիմնական ճյուղերը նացիոնալիզացիայի յենթարկելու մասին։ Շարքային պատվիրակները Փորձում եին մերկացնել այս դատարկահնչուն ֆրանկերի կեղծավորությունը և Հնդկաստանի մասին ընդունած բանաձեռի պարզապես իմպերիալիստական երությունը, բայց դեկավարները թույլ չեին տալիս նրանց խոսելու։

«Անկախ» բանվորական կուսակցությունը գնացել է գերամանական «ձախ» սոցիալ-ֆաշիստների ճանապարհով։ Բըոկուելը Մեքսառնը և այլք չեն խնայում սարսափելի «ձախ» Փրազներ գործ ածել, նույն իսկ այն մասին թե հրաժարվում են ընդունել «բանվորական» կուսակցության դիսցիպլինան։ Սակայն յերբ բանը գործողություններին, գործին և հասնում, անկախները վոչնչով չեն տարբերվում Հենդերսոնից և կամպանիայից։ «Զախերի» անելիքը Անդիայում նույնպես նրանում և կայանում, վոր խանգարեն ձախացող բանվորներին հեռանալու «բանվորական» կուսակցությունից և անցնելու հեղափոխական կովի, անց նելու կոմմունիզմին։

Բուրժուազիայի բանակում տիրում և անգլիական բուրժուական կուսակցությունների պատմության մեջ մինչեւ այժմ բոլորվին չտեսնված մի խառնաշփոթություն։ Լիբերալ կուսակցությունը բաժանվել է յերեք խմբակի։ Սալմոնի խմբակը պաշտպանում և «ազգային» կառավարությանը և առաջադրում և մաքսեր մտցնելու ծրագիր։ Վերջին որերս Լոյդ-Չորջից բաժանված Սեմյուելի և Ռենսոնինի խմբակն ըստ յերևութին նույնպես պաշտպանում և «ազգային» կառավարությանը և չափավոր մաքսային տուբքեր մտցնելու կողմնակից ե։ Ինքը Լոյդ-Չորջը պատրաստվում և նոր առաջադիմական կուսակցություն հիմնելու՝ աղատ առեւտրի ծրագրով։ Կասկած չկա, վոր այդ ծրագրի մեջ լինելու և սոցիալական դեմադոդիայի մի մեծ դոզա։ Բրիտանական իմպերիալիզմի կլասսիկ կուսակցություններից մեկի-Լիբերալ կուսակցության լիակատար քայլքայումն արդեն փաստ եւ

իր ընարողական պլատֆորմում Մակդոնալդը, վորպես «Բրիտանական կայսրության բժիշկ» բացարձակապես պաշտպանում և կոնսերվատորների ամբողջ ծրագիրը, մանավանդ նրանց աջ, պնդագլուխ թերի ծրագիրը։ Մաքսեր մտցնելը ստարիլիզացիայի յենթարկել գումաստ ստերլինգը, պակասեցնել ներմուծումը, լայնացնել ներքին ու արտաքին շուկաները, «անտեսելու» նոր միջոցներ գործադրել՝ բանվորների հաշվին, —ահա Մակդոնալդի ընդունդները, վոր վերցրված են կոնսերվատորների պահեստից։ Մակդոնալդն ու նրա կողմնակիցները աշխատում են քողարկել

բուրժուազիայի դեկտատուրան, —բուրժուազիայի, վորը հավաքում և իր բոլոր ուժերը բանվոր դասակարգի դեմ՝ իր հարձակումը շարունակելու համար։ Հենդերսոնը, Մեկստոնը և նրանց կամպանիան իրենց հերթին քողարկում են Մակդոնալդի մասները վորպեսի փրկեն կապիտալիզմը։

Այս պայմաններում անգլիական կոմունիստական կուսակցությունն իր առաջ խնդիր և դնում՝ վոչ միայն մերկացնել Հենդերսոնի-Մեքստոնի-Մակդոնալդի մասնելուր, այլ և ճիշտ գնահատել այն բեկումը, վոր կատարվում և անգլիական բանվորական շարժման մեջ, և այստեղից ճիշտ բոլշևիկյան յեղբակացություններ հանել։

Այդ բեկումն արտահայտվում և զութ մասսայական լելութների միջոցով։ Մի քանի որվա ընթացքում տասնյակ ու հարյուր հազարավոր բանվորներ փողոց են գուրս լեկել։ Խորտակվում են գարավոր պատմական տրադիցիաները, վորոնք բանվորական շարժմանը լենթուազիայի շահերին։

Չնայած կոմկուսի փոքրաթիվ լինելուն, այս լելույթներն անցնում են նրա ղեկավարությամբ և այդ ցուցց և տալիս, թե ինչպիսի հսկայական հեղափոխական ուժ և կուսակվել բանինչպիսի հսկայական մասսաների խորքերում։ «Բանվորական» կուսակցուվորական մասսաների հսարաւոր միջոցները ձեռք և առնում այս շարթյունը բոլոր հսարաւոր միջոցները ձեռք և առնում այս շարժումը կազմակերպելու համար։ Բայց պրոլետարիատի հսկա հարձակումը ծավալվում է, իր մեջ քաջերով ամենալայն մասսաներին վերջին ցուցերին գուծագուրկների հետ միասին մասնակցել են նաև գործի մեջ յեղած բանվորները, նույն իսկ նրանց ընտանիքները և մի շարք ստորին պրոֆմիութենական կազմակերպություններ։

Բուրժուազիան բանվորների դեմ և ուղարկում վոստիկանական խմբեր, վորոնք ծեծում են ցուցարարներին պարլամենտի—այս «ազատության տաճարի» շենքի առաջ, պրոֆմիությունների կոնգրեսի շենքի առաջ Բրիտանիական որդան «Դեյլի Ռուկերի» խմբագրատունը ջարդում ե։ Բուրժուազիան աշխատում և ջարդել, քայլքայել կազմակերպել բանվորական մասսաներն իր բոնության ապարատի միջոցով և ուժքորմիստների ձեռքով։ Բայց բուրժուազիայի հարձակումը բանվոր դասակարգի վրա չի կարող ըուժեղացնել վերջինիս դիմադրությունը և հականարձակման անցնելը կոմկուսի ղեկավարությամբ։

Այս պայմաններում կոմունիստական կուսակցությունն իր առօդ խնդիր և դնում՝ ձեռնարկներում, սլրովմիություններում, աշխատանքի բարսաներում բանվոր դասակարգի միասնական հեղափոխական ճակատ ստեղծել, բանվորների, զինվորների, նա- վաստիների մասը ծառայողների միասնական ճակատ ստեղծել՝ բուրժուազիայի ընդհանուր հարձակման դեմ կռվելու համար:

Անգլիայի կոմունիստական կուսակցությունը հանդես և գա- լիս գործողությունների պարզ ծրագրով: Նա իր գիխավոր և ար- մատական անելիքն և համարում մորիլիդացիայի յենթարկել մասսաները կապիտալի դեմ բացարձակորեն կռվելու համար: Կուսակցությանն ականջ են դնում միլիոններ: Նոր հազարավոր- ների հոսանքը դեպի կուսակցության շարքերն ուժեղացել ե: «Դեյլի Ուորկերի» տիրաֆը արագ կերպով աճում ե: Կուսակցու- թյունը մտնում է ձեռնարկները, պրոֆմիությունները, նա կան- չում է բանվորներին դեպի հեղափոխական կոլու: Նա առաջար- կում է կազմել լայն միասնական ճակատ ներքեվից՝ դասակար- գային կռվի հիման վրա: Նա անխնա կերպով մերկացնում է բանվոր դասակարգի «Ճախ» դավաճաններին, նա դուրս և գալիս աշխատավարձն ու գործազուրկների նպաստներն ուղղակի կամ անուղղակի ճանապարհով կրնատելու դեմ: Նա պահանջում է մեծ հարցեր դնել բանկիրների, կապիտալիստների, կալվածատերերի վրա, ազատել բանվորներին և մասն ծառայողներին ուղղակի և անուղղակի հարկերից: Նա դուրս և գալիս այն տարիքների ու հարկերի դեմ, վորոնք թանգացնում են առաջին անհրաժեշտու- թյան առարկաները: Նա ամենավճռական միջոցներն ե առաջար- կում թանգության դեմ կռվելու համար: Նա հանդես և գալիս «Թող կորչի աղքային կառավարությունը» լողունգով:

Անգլիական կոմունիստական կուսակցությունը ծավալում է կրիզիսից հեղափոխական ճանապարհով դուրս գալու ծրագրը: Ի պատասխան Հենդերսոնների և Բրելֆորդների դեմագոգիա- կան պլատֆորմի-բուրժուազիայի դիկտատուրայի որոք պլանա- ցին տնտեսություն ունենալու մասին, կոմունիստական կուսակ- ցությունը բանվոր դասակարգի առաջ համարձակ կերպով հարց և դնում, վոր խորհրդակին Անգլիան միակ յելքն և բանվոր դա- սակարգի համար:

Անգլիայի բանվորական շարժման մեջ տեղի և ունենում համաշխարհային պատմական նշանակություն ունեցող յերեւլիթ: Մասսաները սկսում են վոտք դնել հեղափոխական դասակար- գային կռվի ճանապարհին: Ամեն ինչ կախված է մասսայական կոմունիստական կուսակցությունից, վորը թե Անգլիայի բանվոր

դասակարգի և թե գալութների հեղափոխական շարժման շահերի միակ պաշտպանն ե:

Անգլիական պրոլետարիատն ու նրա կոմունիստական կու- սակցությունն ապահով կարող են լինել, վոր համաշխարհային պրոլետարիատը համակրում ու աջակցում և նրանց վորովհետեւ նրանց գործը ամբողջ աշխարհի բանվորների գործն ե:

(«Պրավդա» 9/X—31 թ. Առաջնարդող):

Աշխատանի նյութ № 6.

ԿԱՐԱՎԱՐԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Բրյունինգի կառավարությունը հրաժարվել է: Հենց Բրյու- նինգին ել հանձնարարել են նոր կարիքնետ կազմն, վորը պիտք ե ուղինատպին ներկայացնի իր ծրագիրը հոկտեմբերի 13-ին:

Այժմ Բրյունինգի այս յերկրորդ կառավարությունը կազմ- ված ե: Կառավարության պարլամենտական բազան նեղացել ե, վարովնետեւ նրա կազմից դուրս և յեկել ժողովրդական կուսակ- ցությունը: Այդ կուսակցությունը բլոկի մեջ և մտնում նացիո- նալիստների և նացիոնալ-սոցիալիստների հետ և պատրաստ- վում է մասնակցելու «ազգային սովորոցիցիայի» կոնֆերանսին, վորին մասնակցելու են նացիոնալ-հիտերովցիները, «Պողպատե Սաղավարտը», կայզերի բանակի նախկին գեներալները և ար- դյունաբերության ու բանկերի գեներալները: Կառավարության կազմից դուրս և յեկել ժողովրդական կուսակցության անդամ կուրցիոնը: Արտաքին գործերի մինիստրի պորտֆելը ստանձնել ե Բրյունինգը: Զինվորական մինիստրը և ներքին գործերի մի- նիստրը և նշանակված դրեները, մի մարդ, վոր անցել ե երերտի գպրոցը և պատերազմից հետո գերմանական բանակի փաստական գեկավարն ե և նրա զիմանակությունը պետք է թե՛ ուղիսվերից և թե վոստիկանությունից պրոլետարիատի դեմ կռվելու համար: Դրա յերաշխիքը—սոցիալ դեմոկրատ երերտի լավ դպրոցն ե:

Բրյունինգի կառավարությունը սկսել և վերջացը ել ե իր գոյությունը վորպես արտակարգ դեկրետների կառավարություն, մի կառավարություն, վորը Փաշիստական դիկտատուրա ե իրա- գործել՝ սոցիալ-դեմոկրատիայի լիակատար աշակցությամբ:

Բրյունինգի առաջին կառավարությունը գործից հեռացել ե նրա համար, վորպեսզի իր տեղը զիջի նոր կառավարությանը, վորն ընդունակ կլինի ավելի դաժանորեն և ավելի վճռականո-

բեն ապահովելու բուրժուազիայի հարձակման ծըսպիրը՝ բանվոր դասակարգի դեմ,—կոմունիստական կուսակցության հաշիվը մաքրելու և աճող հեղափոխական վերելքի դեմ կովելու ծրագիրը:

Վարկային կրիզիսի սրումը, վորը սկսվել և հուլիսին Դեռատքանկի սնանկացմամբ, արդեն իր աղջեցությունն և դործել արդյունաբերության վրա: Նույն իսկ պաշտոնական տվյալների համաձան, գործազուրկների թիվը հուլիսի հետ համեմատած ավելացել և ավելի քան 400 հազար հոգով և կազմում է 4,355,000 հոգի: Զեռնարկների սնանկացման գեպքերը հաճախակի են դառնում: Սնանկների թիվը 3-րդ յեռամյակում կազմել է 5,451 հոգի, մինչեւ 2-րդ յեռամյակում յեղել և 4,250 հոգի և ամսե ամիս ավելանում եւ: Դրա հետ միասին կարեոր և նկատել, վոր քանի զնում այնքան ավելի խոշոր ձեռնարկներ ու բանկեր են սնանկանում: Յեթե առաջ կրիզիսը տապալում եր համեմատաբար ավելի փոքր ձեռնարկներ, այժմ սնանկանում են խոշոր կոնցերները, Սինդիկատներն ու հսկայական բանկերը:

Մեպտեմբերին տեղի են ունեցել գերմանական կապիտալի նոր արտահոսում դեպի արտասահման, Ռեյխսբանկի վայրութացին ու գեղիգային պաշարը նորից պակասել է 300 միլիոն վոսկի մարկով: Միաժամանակ շրջանառության մեջ գտնվող թղթադրամների մասսան ավելացել է 435 միլիոն մարկով այն ժամանակ, յերբ մասսաների գնողական ընդունակությունը պակասել է, ապրանքային շրջանառությունը կրճատվել և Ռեյխսբանկի մուրհակային պորտֆելն աճել է 800 միլիոն մարկով: Այսպիսով դեպի ինֆլացիա տանող հիմնական գործոններն ակներև են:

Մական բուրժուազիայի շարքերում քննվում և ինֆլացիայի քաղաքականություն տանելու նպատակահարմարության հարցը: Առայժմ կառավարությունը ձեռականորեն ինֆլացիայի դեմ և արտահայտվում: «Ֆորվերտս»-ում հոկտեմբերի 4-ին զետեղված է Հիլֆենդիբրդի հոդվածը, վորը հատկապես ինֆլացիայի դեմ և ուղղած: Բայց սիթե, կարելի՞ և կասկածել, վոր յեթե գերմանական բուրժուազիան բացտրձակապես ընդունի ինֆլացիայի ծրագիրը, սոցիալ-դեմոկրատները, պրոլետարիատի ֆենանսական կողովտման մասնագետ Հիլֆենդինգի գլխավորությամբ, վոչ պակաս կատաղությամբ կակսեն ոգնել իրագործելու ինֆլացիայի ծրագիրը, քան այդ արել են 1918.23 թվական-ներին:

Գետական բյուջեյում և պրովինցիալ կառավարությունների ու մունիցիպալիտետների բյուջեներում դեֆիցիտն աճում եւ: Այդ

դեֆիցիտը կրիզիսի հետևանքով ավելի և ավելի և մեծանում: Այդ դեֆիցիտը ծածկելու համար կրճատվում են գործադրությունների նպաստները, վակվում են գվարուցները, համալսարաններն ու հիվանդանոցները, տների նորոգումը և նոր տներ կառուցելը դադարեցվում են: Միաժամանակ 1932 թ. վետրվարին լրանում և Գերմանիային տված կարճ ժամանակյա վարկերի հապուցման ժամանակը: Այդ վարկերը կազմում են ավելի քան 5 միլիարդ մարկ: Յեկող տարվա հունիսին լրանում և Հուլիսի սլանի համաձայն տված հետաձգումների ժամկետը, վորից հետո Գերմանիան նորից պետք և միսի վճարել ուսպարացիաների միլիարդավոր մարկերը:

Խորացող կրիզիսը չափազանց մեծ լարման և հասցնում դասակարգային հակասությունները: Գերմանական բուրժուազիան վորագությանը հալածելու միջոցով աշխատում և խեղել պրոլետարիատի աճող հեղափոխական կույզը: Բուրժուազիան հետագալում ել մըտադիր և Գերմանիայի պրոլետարիատի և աշխատավորության ուսերին բարդել հրեշտակի կրիզիսի և հսկայական բյուջետային դեֆիցիտի ամբողջ ծանրությունը:

Գերմանական արդյունաբերողների բանկերների և վաճառականների բիրյունինգի կառավարությանն ուղղած մեմորանդումը, վոր հրատարակել և սեպտեմբերի 29-ին, ներկայացնում է իրանից գերմանական բուրժուազիայի պահանջների ծրագիրը, վորը բուրժուական կառավարությունն իրագործելու և սոց-դեմոկրատիայի բացարձակ կամ գողարկված աջակցությամբ: Այդ ծրագիրը հայտարարում է, վոր գերմանական կապիտալիզմը խորտակումից փրկելու համար «պետք և գործադրվեն ինքնողության բոլոր միջոցները»: Դա նշանակում է, վոր բանվոր դասակարգի վրա հարձակվելու իր ծրագիրն իրագործելու համար գերմանական բուրժուազիան ամեն ինչ կանի, նույն իսկ կդիմի քաղաքացիական պատերազմի և գերմանական պրոլետարիատի լավագույն մասի վոչնչացման:

Ծրագիրը պահանջում է խիստ կրճատել սոցիալական նըպաստները, նրանց թվում նաև գործազուրկներին արվող նըպաստը, խիստ կրճատել կապիտալի վրա դրված տուրքերը, նոր վարկեր տալ մասնավոր կապիտալին: Նա պահանջում է վոչնչացնել տարիքային պայմանագրերը, վորպեսզի ամեն մի բանվոր անհատապես պայմանագրվի ձեռնարկողի հետ՝ «ազատ մըցության որենքների» համաձայն:

Գերմանիայի խոշորագույն մոնոպոլիստները նախադժել են գերմանական բանվոր դասակարգի հետագա կողոպտման ծրագիրը, նրա աշխատավարձն ամենասոված մինիմումից ավելի ցածր իջեցնելու ծրագիրը՝ աղատ մըցության «սըբադան» որենքների հիման վրա: Աշխատաղի կենսական մակարդակը պետք է շատ քչով տարբերվի գործազուրկի կենսական մակարդակից, իսկ գործազուրկը պետք է կանգնած լինի սովորակության սահմանին: Բայց վրովիշեան բանվոր դասակարգը թույլ չի տալիս իրեն այդպիսի հեշտությամբ թալանելու, ծրագիրը պահանջում է ուժեղացնել տերրորը բանվոր դասակարգի գեմ:

Խոշոր բանկային ու արդյունաբերական կապիտալը ցանկանում է, վոր իշխանության վլուխ անցնի Հուգենբերգ-Հիտլերի կառավարությունը: Այդ դեպքում սոցիալ-դեմոկրատիան կառավարությանը պաշտպանելու քաղաքականությունից կանցնի ամենալույալ «ոպպոզիցիայի» քաղաքականությանը: Սոցիալ-դեմոկրատական փոստիկանները՝ Փաշիստական բանդաների հետ միասին՝ կըաշեին կոմունիստների և հեղափոխական պրոլետարիատի հաշիվը: Միայն սոցիալ-դեմոկրատները ստիպված կլինեն մի քիչ հեռանալ պետական կարկանդակից և պետապարտի վախուկ տեղիբաց: Այդ դեպքում նրանց, ինարկե, դուրս կը շպրտեն նաև պրուսական կառավարությունից: Այդ դեպքում նրանցից շատերը կանցնեն բացարձակ ֆաշիզմի բանակը:

Բայց այդպիսի գուտ Փաշիստական կառավարության համար շատ մեծ արտաքին-քաղաքական դժվարություններ կլինեին, վորովիշեան դեռևս Ֆրանսիայի հետ համաձայնություն չկա: Ֆրանսիան գերադասում է այնպիսի կառավարություն, վորտեղ սոցիալ-դեմոկրատները հիմք են կազմում և վոչ թե միայն լոյալ «ոպպոզիցիա»: Դեռևս 1930 թ. սեպտեմբերին, յերբ ոեհյուսագի ընտրությունների ժամանակ նացիոնալ-սոցիալիստները հաջողություն ունեցան, ի պատասխան դրան ոտարերկրյա կապիտալը դուրս հանեց արժեքները և իշեցրեց գերմանական արժեթղթերի կուրսը: Ֆրանսիան վախենում է, վոր յեթե իշխանությունը Փաշիստների ճեռքն անցնի, վերջիններիս սոցիալական գեմագորիան մասսաների մեջ կարող է հակավերսալական տրամադրություններն ուժեղացնել: Այնպես վոր Փրանսիական իմպերիալիզմի համար ցանկալի է Բրյունինդի յերկրորդ կառավարությունը, վորին պաշտպանում և սոցիալ-դեմոկրատիան մասսաների համար ցանկալի է Բրյունինդի յերկրորդ կառավարությունը, վորին պաշտպանում և սոցիալ-դեմոկրատիան մասսաների համար ցանկալի է Բրյունինդի յերկրորդ կառավարությունը վորինդի համար ցանկալի է Բրյունինդի յերկրորդ կառավարությունը:

վելը՝ ընդգծելով, վոր Գերմանիայում աջ (այսինքն Փաշիստական, խմբ), կարինետ կազմելը վտանգավոր փորձ կլիներ Յեփրոպայի համար»:

Բրյունինդի և Հուգենբերգի-Հիտլերի տարբերությունն այն բանի մեջն է միայն, թե ով պետք է իրականացնի Փաշիստական դիկտատուրան, ինչ տեմպով ենա իրագործվում և պիտի իրագործվի:

Բրյունինդի նորոգված կառավարությունը պիտի նշանակի, Փաշիստական դիկտատուրայի ավելի առավ տեմպերով իրագործումը սոցիալ-դեմոկրատի անմիջական և ուղղակի աջակցությամբ: Սոցիալ-դեմոկրատիան քողարկվելով «փոքրագույն չարիքի» «թեորիայով», ողնելու և Բրյունինդին իրակարացնելու խոշոր կապիտալի ծրագիրը: «Սոցիալ-դեմոկրատիան հետագայում ել շարունակելու և տանել փոքրագույն չարիքի քաղաքականությունը, գրում և «Թորփերտս»-ը հոկտեմբերի 6-ին, նույն իսկ այն ժամանակ, յեթե փոքրագույն չարիքն ավելի մեծանա, քան մինչև հիմա եր»: Այս հայտարարությունը նշանակում է, նոր սոցիալ-դեմոկրատիան պաշտպանելու և Բրյունինդի յերկրորդ կառավարությանը, վորը Փաշիստական դիկտատուրայի իրականացումն արագացնելու կառավարություն եւ:

Բրյունինդի յերկրորդ կառավարության գործողությունների նախարանն է հանդիսանում նրա առաջին կառավարության վերջին արտակարգ դեկտեմբեր՝ գործազուրկներին քաղաքներից բռնությամբ գուրս քշելու, Քաղաքացիական իրավունքների վոչնչացման, գործազուրկների դրությունն ել ավելի վատացնելու մասին: Այս ուղղությամբ հաջորդականությունը սրբորեն պահանջանակություն է:

Բայց վճռում են գասակարգերը: Գերմանիան ընդառաջ են գնում սուր գասակարգային ճակատամարտերի: Անում և աշխատավորների դիմակրությունը կապիտալի հարձակմանը և բուրժուական-սոցիալ-Փաշիստական տերրորին: Բանվորական մասսաները արագ տեմպով ճախանում են: Նրանք հեռանում են սոցիալ-դեմոկրատիայից և անցնում կոմունիստական կուրսագության շարքերը: Բանվորներին սոցիալ-Փաշիստների աղդեցության տակ պահելու համար արագ կարգով կազմակերպվում և «ձախերի» նոր կուսակցությունն նախկին անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության որինակով: Բայց դա չը կանգնեցնի մասսաների ճախացման պրոցեսը: Սոցիալ-դեմոկրատիայի կրիզիսը զարգանալու և արագացած տեմպերով:

Կոմունիստական կուսակցությունը մասսաների հետ և նը-
րանց գլուխին անցած պայքար ե մղում աճող տերորի դեմ, կա-
պիտալի արշավանքի դեմ, վոր կատարվում ե բանվոր դասա-
կարգի կենսական մակարդակն իջեցնելու նպատակով,—ֆաշիզմի
և սոցիալ ֆաշիզմի դեմ: Կապիտալի հարձակմանը պրոլետա-
րիատը պատասխանում ե հականարձակումով:

Յերկրորդ կառավարությունը, յեթե նույն իսկ հաշվենք
սոց-դեմոկրատների ձայները, պարլամենտում մեծամասնություն
չունի: Սակայն կառավարության հիմնական թուլությունը դրա
մեջ չե: Դասակարգային հակասությունները յերկրում չափա-
զանց սրված են և արագ կերպով աճում են: Ֆաշիստական դիկ-
տատուրայի արագացքած իրականացումն ել ավելի կիսրացնի
այդ հակասությունները: Գերմանական պրոլետարիատն ընդա-
ռաջ և գնում խոշոր դասակարգային ճակատամարտերի:

(«Պրավդա», 11/X—31 թ. Առաջնորդող):



ՀՀ Ազգային գրադարան



31.894

883

4M

Ermeni dilinde

**DUNJA İKTİSADI BƏHRANININ
JENİ QƏRUNUŞU**

Azərnəşr nəşrijjatı

B A Q B — 1931